



24(663)
13.08.2022

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

ԼՍՐԱՐԱՐ

Հանաչել գիտատրուբին եւ գիտար, իմանալ զբանս հանձարոյ

Лусарар ●

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar

ԱՐՅԱՆՈՒՄ ԱՃԽԱՏԱՆՔ ԿԱ

Օգոստոսի 6-ին ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարությունը Ստեփանակերտի «Վալէքս Գարդեն» հյուրանոցային համալիրի բացօթյա տարածքում կազմակերպել է աշխատանքի տոնավաճառ՝ «Արցախում աշխատանք կա» խորագրով:

Միջոցառման մասնակիցները նախ մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք են մատուցել հանուն հայրենիքի պաշտպանության Արցախյան պատերազմներում հերոսացած տղաների հիշատակին:

Ինչպես ասաց ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը՝ աշխատանքի տոնավաճառ կազմակերպելու նպատակն աշխատանք փնտրողներին և բոլոր գործատուներին մեկ վայրում համախմբելն է, որպեսզի հանդիպեն և քննարկեն, թե ով ինչ ունի առաջարկելու: Միջոցառման արդյունքում բազմաթիվ գործատուներ և աշխատանք փնտրողներ կգտնեն իրար և փոխշահավետ պայմանավորվածության կհանգեն, ինչը սոցիալական խնդրի լուծման և տնտեսության համար որոշակի խթան կապահովի: «Մենք լրացուցիչ այլ միջոցառումներ ու մեխանիզմներ էլ ենք մտածում, որպեսզի աշխատանք կամ աշխատող գտնելը հեշտ լինի: Դրան զուգահեռ, իհարկե, շատ անելիքներ կան զբաղվածության ոլորտում, այդ թվում՝ վերապատրաստումների, որակավորման ապահովման ուղղությամբ», - հավելեց պետնախարարը:

ԱՀ սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարի տեղակալ Արամ Վերդյանի տեղեկատվությամբ՝ Արցախյան երրորդ պատերազմից հետո առաջին անգամ կազմակերպված աշխատանքի տոնավաճառին մասնակցում է 61 գործատու ավելի քան 10 ուրուտից: Նրանք ներկայացրել են 1500-ից ավելի աշխատատեղ 200 տարբեր մասնագիտություններով: «Տոնավաճառը լավ հարթակ է աշխատանք փնտրողների ու առաջարկողների և կրթական հաստատությունների համար և վառ ապացույցներից, որ Արցախը կա, եղել և լինելու է հայկական բարիքներ ու արժեքներ ստեղծող երկիր», - ասաց Ա. Վերդյանը:

Տոնավաճառի մուտքում տեղադրված էին թափուր հաստիքների վահանակները, որոնցում նշված էին կազմակերպությունները, թափուր հաստիքները և տաղավարների համարները: Իսկ տաղավարները հերթականությամբ դասավորված էին մուտքի մեծ վահանակից սկսած, որտեղ նստած էին տվյալ կազմակերպության աշխատակիցներ, և աշխատանք փնտրողները կարող էին մտնել

նալ ու իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններն ստանալ աշխատանքի բնույթի, աշխատավարձի չափի, պահանջվող հմտությունների և այլնի մասին:

Մուտքի վահանակներին մի հայացք իսկ նետելով՝ պարզ է դառնում, որ ամենից շատ թափուր աշխատատեղեր ունեն շինարարության, առողջապա-

շարունակել: Եվ բոլորը աշխատողների պակասի համար գրեթե նույն պատճառներն են նշում: Ներկայում շինարարության ծավալները մեծացել են, Հայաստանից հիմա աշխատողներ չեն գալիս հավանաբար դարձյալ նույն պատճառով: այնտեղ էլ է շինարարության ծավալը մեծացել, իսկ երիտասարդները նախընտրում

լով. «Լավ գողող բերես, օրական մինչև 11 հազար դրամ կտան»: «Բայց չպիտի՞ մասնագետ լինի», - հետաքրքրվեցի ես: «Եթե լավ ջահել գա, կդնեն գողողի հետ, որ սովորի, ուրախ կլինեն», - պատասխանեց Ս. Հարությունյանը: Դե, իսկ պատրաստի արհեստավորների մասին էլ խոսք չկա: Որանք պահանջված ու պահանջված են: «Փոթորաթյուն ամսական մինչև մեկ միլիոն դրամ ենք տալիս», - շարունակում է «Պանտ»-ի տնօրենը:

Այդ պահին տաղավարին մոտեցավ ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը և հետաքրքրվելով՝ խորհուրդ տվեց. «Այդպես որ ման գաք՝ աշխատող չեք գտնի, ավելի լավ է երեխաներ վերցնեք և սովորեցնեք, դասընթացներ կազմակերպեք, շրջեք բուհերով»: «Այդպես էլ ենք անում, բայց բանակ չկա, - ասաց Ս. Հարությունյանը. - աղջկների համար մտել ենք բուհերը: Մի աղջիկ ինժեներ է պետք, որ ակտերը



հուլյան, կրթության ոլորտները: Շինարարական կազմակերպությունների տաղավարների մոտ, որ հիմնականում ներկայացված էին երկար ձգվող երկու շարքերից մեկում, պոտենցիալ շահառուները, կարելի է ասել, կանգ չէին առնում: Որ շինարարության ոլորտը արհեստավորների և բանվորների մեծ կարիք ունի, նոր երևույթ չէ: Բայց ներկայում այդ սղությունն ավելի է զգացվում: Այստեղ էր Արցախում շինարարական խոշոր և հին կազմակերպություններից մեկը՝ «Պանտ»-ը: Ի դեպ, տոնավաճառում եզակի էին դեպքերը, երբ տաղավարը ներկայացնում էր հենց ինքը՝ տվյալ կազմակերպության ղեկավարը, եթե չհաշվենք տոնավաճառում շրջող ԱՀ առողջապահության, ԿԳՄՍ և բնակամաբար՝ կազմակերպիչ ՍԶԷ նախարարներին: Աշխատանք փնտրողները «Պանտ»-ի ղեկավար Սերգեյ Հարությունյանից, «Միք շին»-ի տնօրեն Աշոտ Մանուչարյանից՝ առաջին ձեռքից կարող էին ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները: Եվ այս, և՛ մյուս շինարարական կազմակերպությունների պահանջարկը միանման է: Այսպես, «Պանտ»-ին հարկավոր են բանվոր՝ 80, շաղափի մասնագետ՝ 20, ամրակորդ՝ 10 և այլ աշխատողներ, «Գրանդ ալյանս»՝ սալիկապատող՝ 60, բե-տոնագործ՝ 20, քարտաշ՝ 20 և այլն, «Եվրոստրոյ»՝ ներկարար՝ 100, բետոնագործ՝ 30, «Միք-շին»՝ ներքին հարդարման աշխատանքներ՝ 30, «Կապավոր»՝ էքսկավատորի մեքենայագետ-վարորդ՝ 15, բանվոր՝ 70: Այս շարքը կարելի է



են պայմանագրային ծառայությունը բանակում, որտեղ ավելի բարձր են վարձատրվում կամ էլ... չեն ուզում աշխատել: Իսկ շինարարության մեջ աշխատավարձը, համեմայն դեպս, ցածրերից չէ, ինչպես վկայեց Ս. Հարությունյանը հետաքրքրվող երիտասարդներից մեկին տված իր պատասխանում. «Բանվոր կա, որ գալիս է բնում: Բանվոր էլ կա, որ շատ լավ է աշխատում, աշխուժեցրեք անմիջապես կողմնորոշվում է՝ ինչ տեսակ աշխատող է: Բանվորն օրական ստանում է 6-7 հազար դրամ, լավ բանվորը՝ 8000 դրամ, սուպեր բանվորը՝ 9000 դրամ»: Երիտասարդը հետաքրքրվեց, թե ինչ պիտի անի բանվորը: «Արմատուրա պիտի կապի, վարպետին օգնի, պետք լինի՝ բահով աշխատի: Իսկական տղամարդու աշխատանք», - բացատրեց Ս. Հարությունյանը: Երիտասարդը հեռախոսահամար խնդրեց: Ս. Հարությունյանը տվեց իրենց կողմից կառուցվող երեք բազմահարկ շենքերից մեկի շինուղեկավարի համարը՝ ավելացնե-

գրի, բայց չենք գտնում: Մինչև մի էլեկտրոնային ենք գտել, մի տարի է անցել»:

Շուրջ 100 բուժաշխատողի թափուր տեղ կա առողջապահության ոլորտում: Բժիշկների պահանջարկ կա ինչպես Ստեփանակերտում, այնպես էլ շրջաններում: «Տարեկան նպատակային տեղերով 30-ից ավելի դիմորդ է ընդունվում Երևանի բժշկական համալսարան, դարձյալ՝ չեն համալրում»՝ մեր հարցին առողջապահության ոլորտի ներկայացուցիչը պատասխանեց, որ ավարտելուց հետո բոլորը չէ, որ վերադառնում են Արցախ, դատական ճանապարհով պետությանն են վերադարձնում պահանջված գումարը ու դրանով իրենց պայմանագրային պարտավորությունը կատարած համարում: «Մենք չունենք ազատ բժիշկ, որ աշխատանք չունենա», - պարզաբանեց նա: Ի տարբերություն բժիշկների, երբ չաշխատող չկա, միջին բուժաշխատողների պահանջարկ մայրաքաղաքում չկա,

բայց շրջաններում կա, իսկ տոնավաճառում տաղավարին մոտեցողները հենց մայրաքաղաքում էին ուզում աշխատանք:

Կրթության ոլորտում, կոնկրետ դպրոցներում, ուսուցիչների թափուր տեղերի երևույթը նոր չ, ինչը մտահոգիչ է: Պարտադիր չէ, որ տոնավաճառ լինի, որ այդ պահանջը ներկայացվի հանրությանը: Ամեն տարի նախարարությունը հայտարարություն է տալիս ուսուցիչների թափուր տեղերի մասին, որոնք համալրվում են մասնակիցներով: Այնուհանդերձ, տոնավաճառում կրթության տաղավարը ամենամարդաշատներից էր: Բայց մոտեցողները ցանկություն էին հայտնում աշխատել Ստեփանակերտում կամ մայրաքաղաքին մոտ գյուղերի դպրոցներում: Իսկ թոշակառուներին չեն գրանցում:

Տոնավաճառում նաև «Գրիգոր Նարեկացի» և «Մեսրոպ Մաշտոց» համալսարաններն էին ներկայացրել դասախոսների թափուր տեղերը: Հայտնի է, որ առհասարակ բուհերը տարեցտարի քիչ թվով ուսանողներ են հավաքագրում, ու գնալով շատ անում են մասնագիտությունների, հատկապես՝ մանկավարժական, թափուր տեղերը: Բայց որ արդեն նաև դասախոսների կարիք կա, քիչ ասել է՝ զարմանք է հարուցում: Չէ՞ որ բուհը բուհ է առաջին հերթին ուսանողով և դասախոսով: Եթե և՛ մեկը, և՛ մյուսը չկան (կամ պակաս են), ինչի՞ մասին է դա խոսում:

Աշխատանքի տոնավաճառը սրանով չավարտվեց. թափուր տեղերով վահանակները տեղադրված են կառավարության շենքի դիմաց հրապարակում, և ովքեր ներկա չեն եղել, աշխատատեղերին կարող են ծանոթանալ այստեղ: Այն տեղադրված է նաև սոցիալական զարգացման և միգրացիայի նախարարության կայքում: Արդյունքները պարզ կդառնան մի երկու ամսից:

Իհարկե, եվրոպական չափանիշներով աշխատանքի տոնավաճառ կազմակերպելը գնահատելի է, բայց մեր պարագայում, երբ արդեն հաղթող երկիր չենք, որ համազետ սպասենք, ինչպես առաջ էր (չնայած դրա իրավունքն էլ չունեինք), ու բոլորիս ցանկությունն է ապրել և ապրեցնել Արցախը, պահանջվում է անցկացնել գործում միջոցառումներ՝ սկսած գյուղեգյուղ շրջելուց և մարդկանց հետ առերես հանդիպելուց, ինչպես ընտրությունների ժամանակ են ծայրեր հավաքում, վերջացրած՝ համալիր և կտրուկ միջոցառումներ իրականացնելով:

Սվետլանա ԽԱՀԱՏՐՅԱՆ

ՃՅՆԱՐԻՑ ՃԱՆԱՊԱՐԿ

ՄԵՐ ՓՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՉՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՉՆԿԱՅՄԱՆ ՄԵՅ Է



«Լուսարար»-ի գրուցակիցը ՀԱՆ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի տնօրեն Գոռ սարկավազ Գյուրջյանն է:

«Լուսարար»-ի գրուցակիցը ՀԱՆ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի տնօրեն Գոռ սարկավազ Գյուրջյանն է:

Քարոզչության և դաստիարակության կենտրոնը պատերազմից հետո կարծես նոր ու ավելի կարևոր առաջնություն է գործում: Խոսենք ընդհանուր գործունեությունից, այն ինչքանով է նպաստում հոգևոր կյանքի կայուն զարգացմանը:

Մինչև 2020թ. պատերազմը Արցախում գործում էր թեմի քարոզչության և դաստիարակության կենտրոնը: Պատերազմից հետո հասկանալի պատճառներով որոշ ժամանակ այն դադարել էր կատարել իր բուն գործառնությունները, բայց շարունակվում էր գործել: Քանի որ մարդու հոգին է կենդանարարն ու մարմնի ղեկավարողը, ուստի նաև ազգային կյանքում մեր բոլոր խնդիրները, կորուստներն ու պարտությունները կախված են ազգի հոգևոր առողջության մակարդակից: Այս պարզ ճշմարտությունից ելնելով և հետպատերազմյան Արցախում հոգևոր քարոզչությանը նոր թափ հաղորդելու նպատակով 2022թ. հունվար ամսից Արցախի թեմի առաջնորդ Տեր Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի նախաձեռնությամբ վերագործարկվեց թեմի քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնը: Թեմի ՔՂԲԿ-ի խնդիրն է տարատեսակ ծրագրերի և համագործակցությունների միջոցով Քրիստոսի Ավետարանի լույսը դարձնել մատչելի և հասանելի ժողովրդի ավելի լայն շրջանակների համար:

Կենտրոնի աշխատանքների հասցեատերերի շրջանակը պայմանականորեն կարող ենք բաժանել երկու մասի՝ ուսումնական հաստատություններ (մանկապարտեզ, դպրոց, համալսարան) և մեր հասարակությունը իր ամբողջության մեջ՝ որպես քարոզչության հասցեատեր: Անշուշտ, ամեն հոգևորական և նույնիսկ հավատացյալ իր կյանքով պետք է լինի Աստծո խոսքի կենդանի քարոզիչ և դաստիարակ, բայց համակարգվածությունը միշտ էլ անհրաժեշտ է ընդհանուր գործի հաջողության համար: ՔՂԲԿ-ի ձևաչափը ընդունված է բոլոր ավանդական եկեղեցիների, այդ թվում նաև՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կողմից, այսինքն՝ ունենալ հատուկ գործադիր մի մարմին, որի գլխավոր գործառնությամբ քարոզչության ու քրիստոնեական դաստիարակության կազմակերպումն է:

Արցախի թեմի ՔՂԲԿ-ն վերագործարկումից ի վեր աշխատում է վերոնշյալ ձևով: Մենք ունենք արդեն հաջողված և աշխատող ծրագրեր՝ կապված երեխաների, երիտասարդների և հանրակրթական հաստատությունների հետ՝ կիրակնօրյա դպրոցներ երեխաների համար, եկեղեցիներին կից երիտասարդաց միություններ, պարբերաբար այցելություններ հանրակրթական ուսումնական հաստատություններ:

Իստեղծ կիրակնօրյա դպրոցների մասին: Ընդհանուր առմամբ քանի՞ կիրակնօրյա դպրոց է գործում Արցախի թեմում, և ի սկզբանե ի՞նչ նպատակով են բացվել դպրոցները, կարողանում են հասնել դրան:

Կիրակնօրյա դպրոցների բացումը մեր առաջին հաջողված ծրագիրն էր: Նախնական փուլում ծխական քահանաների միջոցով կատարվել է ուսուցիչների հավաքագրում, որոնց համար կազմակերպվել է երկօրյա մեթոդական վերապատրաստում Արագածոտնի թեմի կիրակնօրյա դպրոցների կազմակերպիչների կողմից: Դրանից

հետո սկսել են գործել 11 կիրակնօրյա դպրոցներ Արցախի տարբեր բնակավայրերում՝ ավելի քան 325 մասնակից մանուկներով: Կիրակնօրյա դպրոցում երեխաներն ունենում են երկու 45-րոպեանոց դասաժամ: Առաջին ժամը լինում է Աստվածաշնչի ուսուցում, իսկ երկրորդ ժամը՝ նույն թեմայի հետ կապված ձեռքի աշխատանքներ կամ խաղեր:

Բոլոր ֆինանսական ծախսերը՝ ուսուցիչների աշխատավարձ, գրենական պիտույքներ և երեխաների Սուրբ Ծննդյան նվերներ, հոգում է Արցախի թեմը: Ծրագրի հիմնական նպատակն է Աստծո խոսքի միջոցով երեխաների ճիշտ դաստիարակությունը և զարգացումը: Մեկ տարվա փորձը ցույց է տվել, որ այս ձևաչափը բավականին ընդունելի է մեր հասարակության համար, և օր օրի ավելանում է մասնակցել ցանկացողների թիվը:

Այսինքն՝ մեծ նպատակ է օրինակելի սերունդ ունենալը:

Իսկապես, ցանկացած ազգի շարունակականությունը կախված է նրա անդամների բարոյական և հայրենասեր ու հայրենատեր լինելու մակարդակից: Աստվածաշունչն էլ է մեզ պատգամում թե՛ «Արդարությունը բարձրացնում է ազգին, իսկ մեղքը ժողովուրդներ է կործանում» (Առակ. 14:34): Մեր հիմնարար փրկությունը մեր ազգի բարոյական ազնվացման մեջ է, և այս ընկալումով էլ մեր աշխատանքները կենտրոնացրել ենք մատաղ սերունդի վրա, որովհետև նրանք նման են մաքուր թղթերի (Tabula rasa), և ինչ որ գրես այնտեղ, դրանով կայանաավորվի նրանց հետագա կյանքը: Կիրակնօրյա դպրոցն այդ թղթերի վրա ճիշտ գրելու լավագույն վայրն է:

Ճշմարիտ քրիստոնյա, որո՞նք են այն հիմնական արժեքները, որ պետք է կրի մարդը:

Ճշմարիտ քրիստոնյայի համար կա հիմնական մեկ նպատակ՝ հնարավորինս նմանվել մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Սա ենթադրում է կյանքը ապրել Աստծո տասը պատվիրանների համաձայն՝ բայց այս ամենը համեմելով քրիստոնեական սիրով և խոնարհությամբ: Սրանք ոչ թե զուտ տեսական խոսքեր են կամ զուտ հոգևոր կյանքով ապրել ցանկացող մարդու համար գրված առանձնաշնորհյալ կանոններ ու կյանքի բազում տարբերակներից մեկը, այլ կյանքով փորձված ճշմարտություններ:

Այսօր շատ են մերթին և արտաքին մարտահրավերները: Հոգևոր կրթությունը, քարոզչությունը, Ձեր կարծիքով, կարո՞ղ են ինչ-որ բան փոխել: Մենք ընդհանրապես դեպի ո՞ր պետք է մայնք:

Կոնկրետ մեր երկրի վրա եթե օրինակ բերենք, կտեսնենք, որ քրիստոնեական կենսակերպի բացակայությունը ունենում է շոշափելի բացասական հետևանքներ: Քրիստոսը կոչ է անում ամեն մարդու, ով ուզում է փրկվել, ուրանալ իր անձը և զնալ Իր ետևից: Նույն պարագան է նաև մեր ազգային, պետական կյանքում: Եթե մենք, իրոք, ուզում ենք հզոր երկիր ունենալ, ապա ամեն ասպարեզում պետք է ուրանանք մեր անձը, նախ փնտրենք մեր երկրի, ընդհանուրի շահը, որի հետ ինքնընտանդված կզա մեր օգուտը: Բայց զոնե անցնող 30 տարում մատնեի վրա կարող ենք հաշվել կարևոր պաշտոն զբաղեցնող մարդկանց, ովքեր փոքր-ինչ ուրացել են իրենց անձը: Պատկերը շատ տխուր է, իսկ ճանապարհը հստակ ոչ թե ինձ համար, այլ մեզ համար, ոչ թե իմ տան համար, այլ մեր հայրենիքի համար, ոչ թե իմ Աստվածը, այլ մեր Աստվածը:

Մենք պետք է քաջություն ունենանք մեր սխալները տեսնելու, վեր հանելու, շտկելու և առաջ շարժվելու, բայց այսօր ամենաբարձր պաշտոնյայից սկսած մինչև ռամիկ քաղաքացի զբաղված են մեղավորներ փնտրելով, իրար մեղադրելով: Մենք ազատագրեցինք հայրենիք, սակայն չապրեցինք այն պահելու տեսլականով և մենք կորցրեցինք հայրենիք, սակայն այժմ չենք ապրում այն ազատագրելու, վերագտնելու տեսլականով: Որպես հոգևորական և որպես արցախաբնակ հայ՝ վստահաբար կարող եմ ասել, որ մեր փրկությունը Աստծով միասնության մեջ է, մնացած բոլոր միավորումները մարդկային են և ժամանակավոր:

Ջրուցեց՝ Կովա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՑԱՒՑԻ ԵՐԵՒԱՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՀԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՃԱՄԲԱՐԻՆ



Օգոստոսի 8-ին Արցախի մի խումբ երեխաներ ՀԱՆ Արցախի թեմի հոգևորականների ու մանկավարժների առաջնորդությամբ մեկնել են Գուգարաց թեմի «Ծիծեռնակ» ճամբար:

Այս մասին տեղեկացնում են Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմից՝ հավելելով, որ երեխաներին ճանապարհելու էր եկել Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանը:

Սրբազան Հայրն իր օրհնությունն է փոխանցել երեխաներին ու բարի ճանապարհ մղալով նրանց: Սրբազան Հոր առաջնորդությամբ Ստեփանակերտի Ս. Աստվածածին Մայր Տաճարի բակում հավաքված երեխաների հոծ խումբն արդթք է բարձրացրել առ Աստված և ուղևորվել դեպի ճամբար: Արցախի տարբեր բնակավայրերից մեկտեղված ճամբարականներն առաջիկա օրերը կանցկացնեն ինտերակտիվ ծրագրով:

ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ «ԱՐՄԱԹ»-Ի ՃԱՄԲԱՐԻՆ

«Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ծրագրերի ղեկավար Սեդրակ Վարդանյանի նախաձեռնությամբ և ԱՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Արցախից 54 դպրոցական այս ամառ մասնակցել է Դիլիջանի Մոնթե Մեթոնյանի անվան ռազմամարզական վարժարանի տարածքում անցկացված «Արմաթ» տեխնոլոգիական ճամբարին: Արցախցի ճամբարականների առաջին հերթափոխը՝ 32 դպրոցական, Դիլիջանում էին հունիսի 28-ից մինչև հուլիսի 7-ը: Իսկ հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 3-ը իրականացված երկրորդ հերթափոխին Արցախից 22 աշակերտ է մասնակցել:



Տեխնոլոգիական ճամբարի կազմակերպիչները հազեցած ծրագիր էին նախատեսել ճամբարականների համար՝ ռոբոտաշինություն, անօդաչու թռչող սարքերի ծրագրավորման, ղեկավարման դասընթացներ, ինչպես նաև ժամանցային ծրագրեր:

«Արմաթ» տեխնոլոգիական ճամբարն ամենամյա բնույթ է կրում: Կազմակերպիչները հույս ունեն, որ տարեցտարի ավելի շատ աշակերտներ ընդգրկելու հնարավորություն կունենան:

Օգոստոսի 9-ից մինչև օգոստոսի 18-ը «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված՝ Սևանի ափամերձ «Ծովհնար» ռազմամարզական ճամբարում իրենց ամառային հանգիստն են անցկացնում Ադրբեջանի կողմից Արցախի բռնազավթված բնակավայրերից տեղահանված 114 աշակերտներ:

ՍԵՎԱՆԻ ԱՓԻՆ



Օգոստոսի 9-ից մինչև օգոստոսի 18-ը «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված՝ Սևանի ափամերձ «Ծովհնար» ռազմամարզական ճամբարում իրենց ամառային հանգիստն են անցկացնում Ադրբեջանի կողմից Արցախի բռնազավթված բնակավայրերից տեղահանված 114 աշակերտներ:

Տեղահանված արցախցի երեխաներին ճամբարում ընդգրկելու համար հիմք է հանդիսացել Օպերատիվ շտաբի դիմում-խնդրանքը ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը:

Արդյունքում գերատեսչությունն արցախցի երեխաներին զիջել է իր աշխատակիցների երեխաների համար նախատեսված 114 տեղը: Օպերատիվ շտաբը հատուկ շնորհակալություն է հայտնում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ ընդառաջելու, իսկ «Երկրապահ կամավորականների միություն» հասարակական կազմակերպությանը՝ ֆինանսավորելու համար», - մասնավորապես նշված է հաղորդագրությունում:

ՈՒՍԱՐՎԱ ԶԵՄԻՆ

ՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՀԱՄԱՑԱՆՑ



Գտնվելով Նորչենոն՝ ԿԽՄԿ-ի կողմից այդտեղ կազմակերպված թատերական մի ներկայացման կապակցությամբ, այցելեցինք դպրոց, որը զարմացրեց կոկիկ, լուսավոր, հարմարավետ իր դասասենյակներով, մաքրությամբ, անհրաժեշտ ուսումնական սարքավորումների առկայությամբ: Տեղեկացանք, որ դպրոցում սովորում է 50-ից ավելի աշակերտ: Իսկ թե ընդհանրապես ինչպիսին են դպրոցի առօրյան, ուսումնական գործընթացը, ինչ խնդիրներ ու անելիքների կան, տեղեկացանք Նորչենի միջնակարգ դպրոցի տնօրեն Սամվել ԱՎԱՆԵՍՅԱՆԻՑ:

- Պարոն Ավանեսյան, ամռան ժամանակաշրջանում սովորաբար դպրոցների շենքերը ինչ-որ չափով վերանորոգման են ենթարկվում: Ընթացում են նման աշխատանքներ, եթե՝ այո, ապա՝ ի՞նչ փուլում են:
- Դպրոցի շենքը բավականին բարվոք վիճակում է: Պարզապես շենքը երկու խնդիր ունի՝ ներսում

ջուր չկա, և դրա հետ կապված՝ ներսում սանգոհանգույց չկա: Ամեն տարի թեթևակի նորոգում իրականացվում է, ընդհանուր մաքրման, պատերի սպիտակեցման, հատակի լաքապատման աշխատանքներ կատարվում են: Շինանյութերը տրամադրում է շրջվարչակազմը:

- Ինչպե՞ս ավարտեցիք ուսումնական տարին:

- Դպրոցն ավարտել է 7 աշակերտ ու բավականին՝ հաջող: Բայց սեպտեմբերին 1-ին առաջին դասարանում կունենանք ընդամենը 2 աշակերտ: Անցած տարի ունեցել ենք 3 առաջին դասարանցի, նախանցած տարիներին՝ 6: Այո, ցավոք, նվազման միտումն ակնհայտ է: Վերջին տարիներին ծնունդների թիվը գյուղում նվազել է:

- Ինչի՞ հետ է դա կապված՝ պատերազմից հետո երկրում տիրող լարված իրավիճակի՞, թե՞ այլ պատճառներ էլ կան:

- Չեն կարծում, թե լարվածությունն է հիմնական պատճառը, թե՛ կուղի ինչ-որ չափով դա էլ է ազդում: Բայց հիմնական պատճառները մի քանիսն են: Նախ՝ քիչ զավակներ ունենալու միտումն է տեղ գտնում երիտասարդ ընտանիքների շրջանում: Նաև գյուղում չամուսնացած երիտասարդներն են շատ՝ մի 26-27 հոգի:

- Քիչ չէ, այդ երիտասարդները որ ամուսնանային, երեխաներ կունենային, դպրոցի դասարաններն էլ կունայեկտավորված կլինեն:

- Մանկապարտեզ էլ կունենանք: Իսկ հիմա մի քանի նախադպրոցական տարիքի երեխաները կան Աշանի մանկապարտեզն են հաճախում, կան այս տարի 3ացիում կազմակերպած նախադպրոցականների համար նախակրթարանը:

Այո, երկուսն էլ շատ մոտիկ են, հաճախելու խնդիրը հեշտ է լուծվում:

- Իսկ դպրոցն անհրաժեշտ մասնագետներով համալրված է:

- Այս պահին մասնագետների պակաս չունենք: Նրանք և՛ Նորչենից են, և՛ Աշանից, և՛ 3ացից: Կան տեղահանված ուսուցիչ 3ագրուբից, որը ֆիզիկա է դասավանդում: Մի քանի տարի առջև կադրային խնդիր ունեցինք: «Դասավանդիր, 3այաստան» ծրագրի շրջանակներում մի հրաշալի երիտասարդ ուսուցիչ եկավ մեր դպրոց, որը ոչ միայն տեխնիկական առարկաներ էր դասավանդում, այլև ազգագրական պարերի, երգերի, ռեթոտաշինության խմբակներ էր ղեկավարում: Նա երկու տարի դասավանդեց, բայց մեծ ներդրում ունեցավ ոչ միայն դպրոցի, այլև գյուղի կյանքում:

- Որպես տնօրեն, ուսուցիչ՝ ի՞նչ գնահատական կտայիք այսօրվա ձեր դպրոցի աշակերտների առաջադիմությանը: Ինչքանով են զրազդետ, ձգտում դեպի գիտելիքները:

- Պետք է ասեմ, որ Մարտունու շրջանի այս ենթաշրջանի երեխաները գրքասեր են: Չեն ասում, թե բոլորն են այդպիսին, բայց զգալի մասը գիրք ընթերցող է: Օրինակ, այս ամռանը մեր աշակերտները մեծ քանակով գրքեր են վերցրել գրադարանից, անշուշտ, ընթերցելու համար: Դպրոցականների ակտիվությունը ոչ միայն գրքերի հանդեպ է, այլև ցանկացած միջոցառման կազմակերպման ժամանակ՝ լինի դա երգի, պարի, թատերական ներկայացման համար:

- Այո, այսօրվա միջոցառման ժամանակ համոզվեցինք դրանում:

- Բայց վերջերս ի հայտ է եկել մի բացասական միտում. համացանցի

հասանելիությունը թե՛ դրական և թե՛ բացասական ազդեցություն է թողնում երեխաների վրա: Չեն սխալվի, եթե ասեմ, որ այսօր բոլոր երեխաներն են ապահովված ժամանակակից հեռախոսներով՝ սմարթֆոններ, այֆոններ: Նրանք ցանկացած կայքից կարողանում են տեղեկություն որոնել ու գտնել, օգտվել դրանից իրենց դասերն ավելի լավ սովորելու նպատակով: Բայց նաև տրվում են հաճույքներին, որ անթիվ-անսահման են այդ տիրույթներում: Դա ոչ միայն նրանց ժամանակն է խլում, այլև դասերից է կտրում: Տեսեք ինչ է տեղի ունենում: Մինչև 7-8-րդ դասարանները երեխաները լավ կան շատ լավ են սովորում: Բայց երբ ծնողները նրանց համար, իբրև արդեն մեծացած զավակի, ժամանակակից այդ հեռախոսներից են մկրում, խնդիրներն այստեղից էլ սկսվում են: Շատ ցավալի ու վտանգներով լեցուն միտում է: Դասերը չեն սովորում կան վատ են սովորում, գրքեր չեն կարդում, հետևաբար՝ նրանց մտավոր կարողություններն են թուլանում: Դա ընդհանուր խնդիր է, որ վերջին տարիներին լրջորեն է անհանգստացնում է առաջին հերթին մեզ՝ ուսուցիչներին: Անշուշտ, մի կողմից լավ է, որ կարողանում են օգտվել համացանցից՝ դասերի նյութերը լրացնելու, աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող իրադարձություններին իրազեկ լինելու համար, մյուս կողմից էլ, երեխան իր ողջ ազատ ժամանակը վատնում է իրեն ոչ մի օգուտ չտվող խաղերի ու հաճույքների վրա:

- Ի՞նչ անել: Ո՞րն է խնդիր լուծու՞մը:

- Միայն ուսուցիչներով դժվար է հաղթահարել այդ ցավը: Եիշտ է, ինչ-որ քայլերի դիմում ենք՝ դասերի

ժամանակ աշակերտներից հավաքում ենք հեռախոսները, ավարտին՝ վերադարձնում, բայց դպրոցից դուրս գալուց անհետ մնում են հայտնվում: Պետք է նաև ծնողները գիտակցեն, որ սա իրենց երեխաների համար շատ վտանգավոր երևույթ է, որ բացասաբար է ազդում նրանց առողջության ու ինտելեկտի վրա: Չէ՞ որ դա այն տարիքն է, երբ ուղեղը, անընդհատ մտավոր սնունդ ստանալով, զարգացում է ապրում: Զարգացման փոխարեն հետզարգացում է ապրում: Որոշ ծնողներ դա հասկանում են և տանը սահմանափակում են հեռախոսներից օգտվելու ժամանակը: Բայց ծնողներ էլ կան, որ կան չեն հասկանում վտանգը, կամ ժամանակ չունեն իրենց երեխաների զարգացմանը զբաղվելու:

Ես կոնկրետ առաջարկ ունեմ՝ ուղղված է ծնողներին, և՛ պատկան մարմիններին: Այն ընտանիքներում, որտեղ կան դպրոցում սովորող երեխաներ, տանը տեղադրելով համացանցից օգտվելու սարքը, տեղադրեն նաև ֆիլտրեր՝ սահմանափակելով երեխաների մուտքը համացանց: Այսինքն՝ թողնել մուտք գործել ոչ թե ցանկացած, այլ միայն իրենց դասերին օգտակար կայքերը: Այսօր երեխայի քնահաճույքները կատարելով՝ ծնողը չի հասկանում, թե ինչ վնաս է հասցնում նրան: Մենք՝ խորհրդային դաստիարակություն ստացած երեխաներս, դպրոցից վերադառնալուց անհետ լինելու սովորում, հետո բակում խաղում կամ ծնողներին օգնում ինչ-որ բանով: Անշուշտ, հիմա էլ կան նման աշակերտներ, բայց նրանք համեմատաբար քիչ են:

Ստաննա ԲԱԼԱՅԱ

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆ ԵՐ ՃԱՄԲԱՐԻ ՀԻՄՔՈՒՄ

Օգոստոսի 10-ին ավարտվեց Արցախի պետական համալսարանի կողմից Պատարա գյուղի մերձակայքում կազմակերպված ուսանողական միջազգային վրանային ճամբարը, որը մեկնարկել էր օգոստոսի 1-ին: Փակման հանդիսավոր արարողությանը ներկա էին ԱԶ պետնախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՍՍ

Ծրագրի իրականացման անհրաժեշտություններից էր նաև 3այաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության ամրապնդումը՝ այն դարձնելով ազգային գաղափարախոսության առանցք:

Փակման արարողությանը ուսանողներին ողջունել է ճամբարի միջոցով երիտասարդու-

ցել, որ միայն ուժեղ պետականության առկայության պարագայում ամեն սերունդ կվայելի հայրենիքի նմանատիպ գրկաբաց ընդունելությունը: Շատ ուրախ եմ, որ այս ճամբարի ձևաչափով Մայր 3այաստանից էլ ամեն տարի ունենում ենք մասնակիցներ: Միայն Արցախ կան հայրենիքի մեկ այլ հատված այցելելով ու հուզական կապ ստեղծելով տվյալ անկյունի ու բնակիչների հետ՝ կարող եք հասկանալ, որ այն ձերն է»,- ասել է Ա. Բեգլարյանը՝ կարևորելով երիտասարդության շրջանում հայրենաճանաչողության անհրաժեշտությունը:

Միջոցառումը մեկնարկել է լուրջան րոպեով՝ ի հիշատակ Արցախյան պատերազմներում նահատակված հերոսների: Ծամբարին մասնակցել է 100 ուսանող Արցախի, 33 և արտերկրի բուհերից: Վրանային ճամբարում բնության գրկում 10 ամսնոռաց օրերի ընթացքում ապահովվել է ուսանողների ակտիվ ժամանցը, նրանց միջև ամրապնդվել միջբուհական, մասնագիտական կապը, ճամբարականների համար կազմակերպվել են ամենօրյա ուսուցողական դասընթացներ, պաշտոնական հանդիպումներ, հրատապ թեմաներով դասախոսություններ, ինտելեկտուալ-տրամաբանական խաղեր, բանավեճեր ու քննարկումներ, սպորտային, մշակութային միջոցառումներ, պատմաճանաչողական այցեր, այցելություններ գործառ, կրակային պատրաստության դասընթաց, իսկ ազատ ժամանցը հագեցած էր երեկոյան խարույկի շուրջ հետաքրքիր քննարկումներով ու խաղերով:



թյան համախմբումն ու միասնականության ապահովումը կարևորել է ԱԶ պետնախարար, ԱրԳԶ խորհրդի նախագահ Ա. Բեգլարյանը՝ ընդգծելով երիտասարդության դերը հայրենիքի զարգացման գործում:

«Այն գաղափարներն ու արժեքները, որոնք դուք ստանում եք ճամբարում և համալսարանական կյանքում, չմոռանաք երբևէ, և հասկանա՞ք, որ մեր ընկերների, ավագների գոհաբերության նպատակի ու արժեքների համար մենք պարտավոր ենք ապրել և ապացու-

յունակալ համալսարանի ուսանող Մելանյա 3ովհաննիսյանը ճամբարի մասնակիցներից է, որն առաջին անգամ էր Արցախում: «Ես երբևէ չեմ եղել Արցախում, բայց միշտ երազել եմ: Այժմ ԱրԳԶ-ի կազմակերպած ճամբարի շնորհիվ այստեղ եմ: Շրջազայելով Արցախում՝ հասկացա, որ իմ պատմական հայրենիքում եմ, որ իմ հայկական հողի վրա եմ ոտք դրել: Ծամբարային 10 օրերն ամսնոռանալի էին, որի ընթացքում ձեռք բերեցինք լավ ընկերներ, ունեցանք հետաքրքիր, ուսուցողական միջոցառումներ: Ընդհանրապես ունեցանք ԱրԳԶ-ին, ճամբարի կազմակերպիչներին»,-ասաց նա:

Ամփոփելով 10-օրյա ճամբարի արդյունքները՝ ԱրԳԶ ՈւՇԳՅԱԳ պրոռեկտոր Վիտյա 3արամիշյանը շնորհակալություն հայտնեց ճամբարի կայացման աջակիցներին՝ խոսե-

լով նաև երկրում ստեղծված իրավիճակում առկա խնդիրները հաղթահարելու և ճամբարի աշխատանքները բարեհաջող ավարտին հասցնելու մասին:

«3այրենիքի գաղափարն այս օրհասական պահին առաջին պլան է եկել: 3այրենիքի, երիտասարդության միջոցով փոփոխություններով առաջընթացի և միասնության գաղափարներն են այն առաջնահերթությունները, որոնց միտված էր ԱրԳԶ ճամբարի նպատակը: Մեր եռամիասնությունն ամրապնդելուն և հայրենիքի գաղափարը ներարկելուն, միասնության գաղափարն առաջ տանելուն են ուղղված նաև մեր ճամբարի աշխատանքները: Մենք միասին կարողացանք հաղթահարել այս օրերի դժվարությունները՝ հասնելով եզրագծին, և այսօր կարող ենք ասել, որ մեր ճամբարը հաջողությամբ կայացել է, ուստի այն իրավունք ունի հաջորդ տարի ևս շարունակվելու»,- նշել է Վ. 3արամիշյանը՝ ճամբարականներին հրավիրելով հաջորդ տարի ևս մասնակցել կայանալիք ճամբարին:

Իր հերթին ՈւՇՏԱ և կարիերայի բաժնի պետ, ճամբարի աշխատանքների պատասխանատու Վահե Գալոյանը շնորհակալություն է հայտնել ճամբարականներին ու ճամբարի կայացման աջակիցներին՝ պարգևատրելով միջոցառումներում ակտիվություն ցուցաբերած թիմերին:

ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ

ԱՄՈՒ ՊԱՇՏԵՔ ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅՈՒՆԵՐԸ ԸՆՅՈՑ ԼԵՂՈՒ

Հայոց լեզու, դու մեր անկողողպտելի գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը: Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, զորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու գույքը, բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր հաղթական: Ցնցոտի հազավ մեր ժողովուրդը, բայց դո՛ւ ծիրանիով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքները, դու թևեր տվիր նրան՝ ժողովրդին:

Ավետիք ԻՍԱԿԿԱՅԱՆ

Պատմական իրադարձությունների բուն գարգացումներ են թե՛ համաշխարհային և թե՛ տարածաշրջանային ասպարեզներում: Ստեղծված փորձություններին դիմակայելու և անախորժ ցնցումներից խուսափելու համար պետք է որ ամուր պահենք մեր ինքնության հիմնասյուները: Մեր ինքնության ամենակարևոր հիմնասյունը մեր լեզուն է, մեր էության, մեր գոյության, մեր անհատականության մշտաբուն ուղեկիցը: Նախ և առաջ անհրաժեշտ է գիտակցումով մոտենալ մեր ով լինելուն և մեր անցած ուղուն: Մենք ժողովուրդ լինելուց զատ (ժողովուրդ՝ նշանակում է երկրի, տերության բնակչություն) առաջին հերթին ազգ ենք, իսկ ազգ՝ նշանակում է պատմականորեն առաջացած հանրություն, որ բնորոշվում է լեզվի, տերիտորիայի, տնտեսական կյանքի, մշակույթի մեջ դրսևորած հոգեկերտվածքի ընդհանրությամբ:

Մեր երկրի և մեր ժողովրդի մասին մենք չէ, որ բարձրաձայնում, բարձրաձայնել ենք: Չկա հին աշխարհի պատմական մի նշխար ու մասունք՝ աքքադական, խուրիտական կամ արամեական արձանագրություն լինի այն, բարելավված առաջին քարտեզը, «Աստվածաշունչ» մատյանը, թե հին աշխարհի առաջին պատմաբաններ Յերոնիմոսի, Քսենոֆոնի, Պլուտարքոսի, Յուլիանոսի Փլավիոսի կամ մեկ ուրիշի գիրք, որտեղ ուղղակի կամ անուղղակի ձևով չխոսվի մեր երկրի ու մեր ժողովրդի մասին: Այդ մասին տեղեկություններ կան նույնիսկ Բիհիսթունի ժայռի վիմագիր արձանագրության մեջ: Իսկ պատմաաշխարհային տարեանցին մեզ համարում է Նոյն հապատի երեք որդիներից մեկի՝ Յաբեթի ժառանգները, մեր նախահայր համարում Թորգոմի (Նոյի ծոռը), իսկ մեր ժողովրդի ինքնանվանումը՝ հայ, իսկ երկիրը՝ Հայք, կապում է Թորգոմի որդու՝ Հայկի անվան հետ: Այդ մասին է վկայում «Հայկ և Բել» հայտնի առասպելը: Մեր դիվանագետներն իրենց գործառնություններն իրականացնելիս պետք է որ այս փաստերն իրենց առաքելության հիմքում ունենան: Որքան էլ տարօրինակ թվա, իմ ներքին բնագործ դա է հուշում: Վերջապես պե՛տք չէ իմանան՝ ուրիշները որ ազգի հետ գործ ունեն. այն կպահանջի գոնե հարգանք դրսևորել աշխարհի հնագույն ազգերից մեկի նկատմամբ: Տարբեր ժամանակներում օտարները մեր երկիրը կոչել են Արմանի, Արմնի, Արմենիա, Հարմինիյու, Արմե, Ուրարտու, իսկ մենք՝ հայերս, Հայասա, Արարատ, Նաիրի, Բիայնա: Բոլորն էլ նկատի են ունեցել նույն երկիրը ու նույն ժողովուրդը, որն ապրել է պատմական Հայաստանի տարածքում, ունեցել է իր ուրույն լեզուն ու մշակույթը: Այդ տարածքում մեր ժողովուրդն ապրել է պատմական անհիշելի ժամանակներից մինչև մեր օրերը:

Լեզուն՝ որպես հաղորդակցության միջոց, մարդկային հասարակության ստեղծման ու գարգացման հիմնաքարն է: Այն նաև տարբեր սերունդներին տարբեր դարաշրջաններին կապող միջոց է: Մարդկությունը դարերի ընթացքում ամբարած փորձն ու գիտելիքները պահում, պահպանում է լեզվի միջոցով:

Մեր լեզուն գարգացման, մշակման ու կատարելագործման պատկառելի պատմություն

ունի: Սկսած կազմավորման շրջանից, հաղթականորեն ելնելով նոր գրական լեզվի իրավունքների նվաճման համար ծավալված գրապայքարի բովից՝ նա դարձավ մեր դասական և ժամանակակից հարուստ, ճկուն ու գեղեցիկ լեզուն: Մեր նոր լեզուն գրական ժառանգորդությամբ յուրացրեց գրաբարի հարուստ ու կենսունակ բառապաշարը, որի միջուկն են կազմում համընդհանուր հայերեն կամ համահայկական բառերը և միավորեց նոր լեզվի՝ աշխարհաբարի բառապաշարին: Լեզվի գարգացմանն ու բառապաշարի հարստացմանը նպաստեց ժողովրդախոսակցական լեզվի, տարածված ու կենսունակ բարբառների բառապաշարից օգտվելն ու օգտա-



գործելը: Լինելով ոչ միայն գրական, այլև կենդանի հաղորդակցման ժառանգ լեզու, այն գտնվում է անընդհատ զարգացման, հարստացման, կատարելագործման գործընթացում: Լեզվի զարգացման էվոլյուցիայի ընթացքում, այնուամենայնիվ, չհաջողվեց լրիվությամբ ձեռքբազատվել օտարաբանություններից, առավել ևս թուրք-պարսկական բառապաշարից: Դեռևս Մխիթար Սեբաստացին, բնութագրելով ռամկական (խոսակցական) լեզուն՝ իբրև աղավաղված բառերով ու թուրք-պարսկական փոխառություններով խճողված լեզու, այն կարծիքին էր, որ անհրաժեշտ է մաքրել այդ աղավաղումներն ու թրքաբանությունները, սովորեցնել ժողովուրդին բուն հայկական բառերը: Եթե ճիշտը խստովանենք, ապրելով հարևանությամբ, շատ թե քիչ ծանոթ լինելով միմյանց կենցաղին, սովորություններին և երկար ժամանակաշրջան լինելով նրանց տիրապետության տակ, կամա թե ակամա թուրք-իրանական բառապաշարը մտել է մեր կենցաղ, նույնիսկ շատ տեղանուններ առայսօր նման հնչեղություն ունեն: Այդ գործին, անկասկած, «օգնել» է նաև ներգաղթը, որ քսաներորդ դարի կեսերին ժամանակ առ ժամանակ զանգվածային բնույթ էր կրում: Միանգամայն պարզ է, որ Իրանից, Թուրքիայից ներգաղթածների բառապաշարի մեջ թուրք-իրանական բառերի օգտագործումն անխուսափելի է: Այդ օտար բառերի փոխարեն հայերեն համարժեք բառերի օգտագործումը կենսական անհրաժեշտություն է և համահունչ մեր լեզուն անաղարտ պահելու գաղափարին:

Խոսել հայերեն, բայց գրել հունարեն, ասորերեն կամ այլ օտար լեզվով, ոչ միայն լուրջ հարված է մեր ինքնությանը, այլև շատ վտանգավոր: Ինչո՞ւն էր վտանգը: Նախ՝ ազգը կմասնատվեր, այդ լեզուները կդառնային գերիշխող ժամանակի ընթացքում, բայց ոչ այնքան հասանելի բնակչության ճնշող մեծամասնության համար (իրավագուրով, աղ-

քատ զանգվածներ): Օտար լեզվով դպրոցների բացումը կդառնար ժամանակի պահանջ (իշխող դասի ժառանգները հեռանում էին երկրից ուսում ստանալու համար), ազգը կկանգներ այլոց ձուլման վտանգի առաջ (հույների, հռոմեացիների, պարսիկների), որը, բնականաբար, նաև վերջիններիս նպատակն էր: Եվ վերջապես օտար լեզվով գրածը հասանելի կլիներ շատ քչերին, ու բովանդակ ժողովուրդը, հետագա սերունդները շատ քիչ բան կհամայնի իրենց պատմության, ինքնության, ստեղծված հոգևոր մշակույթի մասին:

Մեփական գիր ունենալը դարձել էր ժամանակի հրամայական, դարձել էր պատմական անհրաժեշտություն: Այդ գիտակցում էին պետական այրերը՝ արքունիք, նախարարներ, այդ գիտակցում էր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր դասը:

Հայ գրերի ստեղծողը, հայ ինքնուրույն ու թարգմանական գրականության սկզբնավորողը, հայ դպրոցի հիմնադիրը, հայերենի առաջին ուսուցիչը Մեսրոպ Մաշտոցն է: Նա զինվորական գրագիր էր Արշակունյաց պալատում (տիրապետում էր հունարեն, ասորերեն, պարսկերեն, վրացերեն լեզուներին): Թողնելով զինվորական գործը՝ դառնում է վանական: Գրերի ստեղծման իր մտադրության մասին հայտնում է կաթողիկոս Սահակ Պարթևին և Վռամշապուհ արքային: Ստանալով նրանց համաձայնությունը՝ նախ մեկնում է Ասորիք, Դանիել եպիսկոպոսից վերցնում հայերեն տառերը, վերադառնում Վաղարշապատ: Սակայն պարզվում է, որ տառերն անբավարար են հայոց լեզուն ճշտորեն արտահայտելու համար: Եվ վերստին ուղևորվում է Ասորիք: Լինում է Ամիդ, Եդեսիա քաղաքներում: 405 թվականին էլ Եդեսիայում ստեղծում է հայերենի հնչյունական համակարգը ճշտորեն արտահայտող հարմար նշանագրեր, հետո տառերին տալիս անուններ, գտնում հեշտ կարողալու և յուրացնելու պարզ եղանակներ, գրության ուղղությունը և տառերի դասավորվածության հերթականությունը: Որից հետո Մաշտոցը մեկնում է Սամոսատ և հնուտ հնագետ Հռոփանոսի օգնությամբ կատարելագործում նոր տառերի գծագրությունը: Մաշտոցի առաջին թարգմանությունը Աստվածաշնչից էր՝ Սողոմոնի առակները, իսկ սկիզբը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Սրանք մեսրոպատառ առաջին բառերն են, առաջին նախադասությունը:

Հայոց գրերի կարևորությունն ու անգնահատելիությունը արժևորելու և հավերժացնելու համար կաթողիկոս Վազգեն Ա-ի պատվերով 1967թ. ստեղծվում է հայոց ոսկեծույլ այբուբենը, որը պահվում է Էջմիածնի գանձատանը (հեղինակներ՝ Բ. Սողոմոնյան և Ժ. Չալոյան): Հայոց գրերի գյուտի նշանակությունն ու հզորությունը զննհատվեց ու արժևորվեց սկսած արդեն իսկ 5-րդ դարից: «Մեսրոպ Մաշտոցի գյուտը, անտարակույս, այն հզոր գեներ էր, որի շնորհիվ հայ ժողովուրդը պահպանեց իր գոյությունը 5-րդ դարի մեծ պայքարում և մտնելով քաղաքակրթված հնագույն ժողովուրդների ընտանիքի մեջ՝ զարգացրեց իր ինքնուրույն մշակույթն ու շատ հարուստ գրականությունը», - գրել է Հակոբ Մանանդյանը:

Դարեր շարունակ պատերազմների ու աղետների հորձանուտում հայտնված հայ ժողովուրդը դժվար թե դիմանար ու հարատևեր («Կմուրվեք մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին, Կկորչե՛հի՛նք, եթե ճամփին չբոցկալար հայոց լեզուն»), եթե սրի հետ մեկտեղ չունենար իր ամենից գորավոր գեներներից մեկը՝ մայրենի լեզուն, գիրը, դպրությունը: Անկասկած, որտեղ տկարացել է սուրը, գիրն ավելի զորեղ է դարձել, պարզել է

իր պայքարի դրոշմը, ծաղրելով թշնամիների բարբարոսությունները, գրի առնելով է փորձել ոչնչացնել սուրբներից՝ միաժամանակ սերունդներին փոխանցելով մեր երազանքները, հույսն ու հավատը: Անթիվ-անհամար աղետները, ասպատակությունները, կոտորածներն ու թալանը տակավին քիչ են մեր ժողովրդի դիմացկունության, հարատևման գաղտնիքներն իմանալու համար: Իսկ այդ ամենը մեզ է հասել շուրջ 25 հազար ձեռագիր մատյանների միջոցով, որոնց շուրջ 16 հազարը գտնվում է Երևանի մատենադարանում, իսկ մնացածը՝ տարբեր երկրների թանգարաններում: «Այդ ձեռագրերը հայ ժողովրդի ազնվագրության վկայագրերն են», - գրել է հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ. Բրյուսովը: Այդ ձեռագրերը պատմության վկաներ լինելուց զատ գիտական լուրջ աղբյուր են ոչ միայն հայ գիտականների համար, այլ նաև օտարազգի, որովհետև այդ ձեռագրերում շատ տվյալներ, տեղեկություններ կան գրված նաև ինչպես հարևան ժողովուրդների, այնպես էլ բազմաթիվ այլ երկրների պատմության, մշակույթի, կենցաղի, սովորույթների մասին: Հիրավի, այդ է նկատի առել Իյա Էրենբուրգը, երբ գրել է. «Հայաստանն այն երկրներից է, որն ամեն մի խորհող մարդու համար ակունք է ոչ միայն գեղագիտական խոր հիացումների, այլև արվեստի դարավոր արձանների ու ճակատագրերի մասին: Այն երկրներից է Հայաստանը, որի առջև ոչ միայն ուզում են խոնարհվել ու ծունկ չոքել, այլև Արևելքի ժողովուրդների սովորության համաձայն՝ սրբավայր մտնելիս կոշիկները հանել...»:

Յուրաքանչյուր սերունդ պարտավոր է ոչ միայն սիրել, պահպանել մեր լեզուն, այլ նաև հոգ տանել նրա վսեմության, վեհության, զարգացման մասին և հաջորդ սերունդին թողնել առավել կատարյալ, առավել կատարելագործված, ճիխացած, դյուրըմբռնելի լեզու: Սակայն շատ անգամ մենք հակառակին ենք ականատես լինում: Բանավոր և գրավոր խոսքում օգտագործվում են անհարիր, աղավաղված, օտարաձայն բառեր, բառակապակցություններ: Դրանք առավել ակնհայտ երևում են համացանցում, զանազան շուկաներում, հունդային հաղորդումներում: Այս ուղղությամբ լեզվի պետական տեսչությունը, անկասկած, շատ անելիքներ ունի: Ես վստահ չեմ, որ տիրապետում են խոսքի մշակույթին, ինչպես հարկն է, բայց գիտակցում են, որ խոսքի տիրապետման ընթացքը սահման չունի ու անընդհատ զարգացման, կատարելագործման կարիք ունի, և դրան հասնելու համար անհրաժեշտ է պահպանել հայոց լեզվի անաղարտությունը, պայքարել չհիմնավորված նորամուծությունների դեմ, ըստ անհրաժեշտության կազմել նոր տերմիններ և բառեր ու բառակապակցություններ, հասպտումներ, որոնք համապատասխանում են հասարակական կյանքի պահանջներին, հարստացնում մեր լեզուն, օտար լեզուներից փոխ առնել այնպիսի տերմիններ ու բառեր, որոնց համարժեքները հայերենում չկան և (չեն կարող կազմվել)՝ նրանց տալով հայերենի արտասանական և ուղղագրական ձև: Հրաժարվել այնպիսի ձևերի գործածությունից, որոնք խորթ են գրական հայերենի քերականական կառուցվածքին, անհարիր են համաժողովրդական մտածողությանը, շփոթում և խեղաթյուրում են լեզվի ներքին օրինաչափությունները, խանգարում նրա զարգացմանը: Մեզնից յուրաքանչյուրն իր հնարավորություններով շրջանակներում պարտավոր է ամուր պահել ու պաշտպանել մեր ինքնության հիմնասյուներից կարևորագույնը՝ մեր լեզուն:

Լեւոն ԱՆՍԵՆՅԱՆ
գ. Եմիշճան

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՐԾ

ԱՆՁԻՋՈՒՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ



Գառնիկ ԱՎԱՆԵՍՅԱՆ: Ծնվել է 1963թ. Շուշի քաղաքում: Մեկ տարի անց ընտանիքը տեղափոխվել է Ասկերանի շրջանի Շոշ գյուղ՝ հոր ծննդավայրը և այնտեղ ապրել, արարել կյանքի ողջ տարիները: Տեղի միջնակարգն ավարտելուց հետո 1980-1983թթ. սովորել էր Երևանի մեքենաշինական տեխնիկումում՝ ստանալով «Պոլիգաֆ մեքենաների և սարքավորումների տեխնիկ-մեխանիկ»-ի որակավորում:

1983թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի տպարանում: 1983-1985թթ. ծառայել է լ խորհրդային բանակում՝ Գերմանիայում տեղակայված խմբավորման կազմում, իսկ զորացրվելուց հետո շարունակել

աշխատանքը Ստեփանակերտի տպարանում: 1986թ. ընդունվել է Երևանի Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը: 3-րդ կուրսի ուսանող էր, երբ սկսվեց Արցախյան շարժումը: Ակտիվ մասնակցություն է ունեցել կազմակերպված ցույցերին ու նստացույցերին: 1988-ին ուսումը փոխադրեց հեռակա և վերադարձավ հայրենի գյուղ՝ մասնակցելու նրա ինքնապաշտպանությանը: Կամավորագրվելով Շոշի նոր կազմակերպվող ինքնապաշտպանական ջոկատի կորիզին՝ իր ունակություններն ու կարողություններն է ներդրել նրա լրիվ կազմավորման նվիրական գործում: 1989-ին նշանակվել է կոլտնտեսության տնտեսագետի պաշտոնում: 1992թ. հունվարի 26-ին մասնակցել է Քարին տակի պաշտպանության հերոսամարտին: Վաշտն ուժեղացնելու նպատակով Ստեփանակերտում տեղակայված խորհրդային բանակի 366-րդ մոտոհրաձգային զնդից իր մասնակցությամբ դուրս են բերվել հետևակի մարտական շՄՄ-1, շՄՄ-2 և Դեսանտի մարտական հետախուզական մեքենաներ: Հետևակի մարտական մեքենաներն օգտագործվում էին

Գառնիկի կողմից: Նա բազմաթիվ անգամ դրանցով անգիջում մենամարտի էր դուրս եկել թշնամու կողմից կրակ վարող զրահատեխնիկայի դեմ և ամեն անգամ նրանց պատճառով զգալի վնասներ: 1992թ. մայիսի 8-ին իր շՄՄ-2-ով մասնակցել է Շուշիի ազատագրմանը: ՊԲ տարբեր ստորաբաժանումների կազմերում մասնակցել է Շուշիի ենթաշրջանի գյուղերի, Լաչինի, Ասկերանի (Խոջալու, Ասկերան, Նախիջևանի, Արանգամի, Փրջամալ և այլն), Աղդամի, Մարտակերտի, Ֆիզուլիի և այլ շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1994թ. զինադադարից հետո շարունակելով զինվորական ծառայությունը ՊԲ շարքերում՝ որպես Առանձին տանկային գումարտակի 1-ին տանկային վաշտի, ապա՝ գումարտակի հրամանատար, գնդի շտաբի պետ, գնդի հրամանատար և զինվորական այլ բարձր պաշտոններում: Իր տանկով երեք անգամ մասնակցել է Մայիսի 9-ի հաղթանակի զորահանդեսին: 2019թ. սեպտեմբերի 30-ից երկարամյա ծառայության պատճառով անցնում է զինվորական թոշակի փոխգնդապետի կոչումով:

Ծառայության տարիներից գրում է բանաստեղծություններ: Ստեղծագործություններում արտացոլում է բանակային կյանքի դրվագներն ու բացահայտում իր հայրենասիրական զգացմունքները, գրում է իրեն շրջապատող մարդկանց, պատերազմի և նրա պատճառած տառապանքների մասին: Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, «Շուշիի ազատագրման համար», ՀՀ «Մարտական ծառայության համար» և գերատեսչական մեդալներով: Ստեփանակերտ քաղաքի օրհներգի հեղինակն է: Այժմ էլ շարունակում է ստեղծագործել: Իր ստեղծագործությունների մի մասի համար նա հորինել է երաժշտություն: Ունի մինչև 30 մշակված և մշակման ենթակա երաժշտական ստեղծագործություններ: Պահեստագոր արձակվելու հետո ընտրվել է ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարի պաշտոնում, որտեղ և առայսօր աշխատում է: Ամուսնացած է, ունի երեք զավակ, թոռներ: Ստորև ներկայացնում ենք Գառնիկ Ավանեսյանի բանաստեղծություններից մի փունջ:

ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա Ր Ց Ա Ն

ՎԵՐՋՆ ՈՒ ՍԿԻՋՐԸ

Իր կտուրի տակն առած, մտահոգված հարակեզ, Հատիկ - հատիկ հոգ տանելով, դուրս է բերում ասպարեզ:

Անգամ հասուն ու ճաքճաք, պղծված ու չորացած, Նուռը ճկուն ծառի ճյուղին այնպես ամուր է փարված, Ինչպես որդին գերբնական բնագոյ ուժերով ճիգված, Գուրգուրանքի մեծ կարտից, ծնողի ճիտը գրկած:

Ինչքա՞ն է պտուղը համով, կենարար հյութն աղվոր, Մուգ նոնահյութը քաղցրաքամ տոխպ գինի է՝ բոսոր, Նա իր կյանքի ջերմ արևն է պատյանի մեջ ամփոփում, Միասնության խորհրդանիշ՝ էությունը հաստատում:

Նռենի՞, դու անխոս վկա մեր դարավոր ցավերի, Դու որ դարձար փուշն աչքերի զավթիչ հազար ցեղերի, Բազում անգամ հրկիզվեցիր բիրտ ուժերի ձեռքերով, Բայց ծնվեցիր նորից հողից, ջերմ արևի շողերով:

Շողա՛, շողա՛ հուր նռենի, այգիները զարդարիր, Կանաչափայլ տերեւներն ու ծաղիկները շառլիիր, Մեր հին ընկեր, մի վիատվիր, քո գարունը տարածիր, Բազմաչարչար ժողովրդիկ հոգը զինով քո մեղմիր:

ԿՈՉ ՍՁԱՓՈՒԹՅԱՆ

Իմ սուրբ Հայրենիք, իմ հին ու հզոր, Մեծն արքայի երկիր Նախրյան, Անուշիկ, քաղցրիկ օրրան մեղրածոր, Աստվածատուր ու չքնաղ եղենյան:

Տառզ գեղանուշ, բառո՞ք բազմիմաստ, Ձավակներդ հեզ, զորեղ ու ալմաստ, Ուժեղ ես, քանի դեռ միասնական Խոսք ու գործով ենք իրար պարտական:

Ինչո՞ւ խարխուլվեց, ի՞նչը պառակտեց, Մեր միասնության հիմքերն անսասան, Ո՞ր մեղքի համար երկիրն ավերվեց, Մնաց վիրավոր, առանց բալասան:

Ո՞նց վրիպեցինք նորից ազգովի, Թշնամուն բանի տեղ չդնելով Անխուսափելի կրվում կամովի Ազգի սերույթը մահի տանելով:

Ո՞վ էր մեղավոր ..., հիմա ի՞նչ անենք, Որ հայրենիքում համերաշխ ապրենք, Մի՞ թե դժվար է, որ պատմությունից Համապատասխան մեր դասը քաղենք:

Դե, ուշքի եկեք, դե համախմբվեք, Ծնկած տեղից նորից վեր կացեք, Տվեք ուս ուսի՝ հանուն փրկության, Ու տերը դարձեք յուր ազատության:

Իմ հին Արցախ՝ պապենական, հայրենիք իմ եզակի, Օրորոցիդ մանուկն եմ մի, ուժանակը քո բազկի, Բարձունքներից մեկն եմ ես քո սրակատար լեռների, Շեղբը շանթող Ամպրոպածին ու հրակիր թրերի:

Քո խենթացած գետակների մի վտակն եմ սառնորակ, Ու հրակեզ արեգակի պայծառ շողը վառ որակ, Քո դարավոր անտառների ծառերից մեկն եմ ծփող, Ու ավերված օջախներից մեկը նորից շենացող:

Լայնատարած քո հանդերձի մի հանդիվորն եմ անբաժան, Մեկն եմ համառ զավակներից՝ մեղվի նման ժրջան, Ես կարարեմ, կմաքառեմ ամբողջ ուժով, կամբով մեկ, Ու անխնա նվիրումով քեզ կտրվեմ կյանքով մեկ:

Քանի՞ - քանիսն են քեզ տենչում, հող հայրենի նախրյան, Ի՞նձ պես քանի՞ - քանիսն են ջանում քեզ փարվել հավիտյան, Դու մեր հոգին ես երկնատուր ու մեր շունչը հրահուր, Մեզ հետ ես դու միշտ, ամենուր, մենք էլ քեզ հետ քաջակուռ:

Աշխարհ անցիր, եղբայր, ընկեր, երկրներ կան բազմազան, Անծայրածիր, հարուստ ու չար, նեմզաբարո անսահման, Բայց ավանդած պապենական հայրենիքը սրբազան, Աննման է ու ոգեկուռ, չկա մեկը իր նման:

ՄՂՁԱՎԱՆՁԻ ԵԼՔԸ

Երկիրը սուրբ է, մեր աստվածատուր, Լեզուն մեղմանուշ, բառն արևահուր, Որդիքն անծնուրաց և ոչ անճատուր, Նվիրյալ պաշտպան, հայրենյաց մի բուռ:

Քոչվոր ու զավթիչ չեն համակերպվել, Որ հայն է այստեղ ապրել, արարել, հարդախել են նենգ ու ռազմարշավել, Օրրանն ավերել, գանձերն ավարել:

Դարեր շարունակ այդպես է եղել, Բնաջնջել են ու միշտ կեղեքել, Դավաճանները դեռ չեն վերջացել, Սրտերը վառվող մեր չեն հովացել:

Ու դեռ ապրում ենք այսպես այրվելով, Դեռ չի կշտացել ոստիս ավարով, Սպառնում է մեզ մահ խոստանալով, «Ամեն ինչ մերն է» այսպես ասելով:

Մի՞ թե մեղքեր ենք մենք միայն գործել, Աշխարհի հոգսերն անընդհատ բարդել, Մի՞ թե բեռ ենք մեծ, բոլորին դարձել, Որ շահերը մեր երբեք չեն հարթել:

Կին թե տղամարդ, ահել ու ջահել, Պետական այրեր, արդ բավ է միրիել, Բեր ուս ուսի տանք ու համախմբվենք, Փառքը մեր Հայոց նորից ետ բերենք:

Այստեղ արյունն է շաղախել հողին, Անգին շաղախը կտակել ազգին, Այստեղ է կանգնել զորեղ քաջորդու, Կրծքում բաբախող սիրտն իր հոգու:

Այստեղ է նա իր սուրբ ուխտն արել, Լավ ընկերներից, ավա՞ր, բաժանվել, Այստեղ է վերջին իր լույսը տեսել, Եվ վերջին անգամ տաք շունչը փչել:

Այստեղ մահաբեր զնդակն է որսել, Վերջին ճիգերում իր գործն արել, Այստեղ ոստիսից իր կուրծքն է խոցվել, Թիկնեղ մարմինը հողին խոնարհել:

Այստեղ է կյանքին հրաժեշտ տվել, Եվ ընկերներին կսկիծ պատճառել, Այստեղ է տրվել ճակատագրին, Դրել վերջակետ իր մատաղ կյանքին:

Այստեղ ցավն է իր տարել տենդագին, Որդու կարոտով փարվել մայր հողին, Այստեղ է ամբողջ մարմնով ճգնել, Հոգու ճրագը հավիտյան վառել:

Այստեղ նա վերջին բառերն է ասել, Հոգնած աչքերը հավիտյան փակել, Այստեղ սրբացել ու փառավորվել, Մանկուց երագած փարոսը գրկել:

Այստեղ նա Տիրոջ դռներն է թակել, Սիրով, գրկաբաց ներս հրավիրվել, Այստեղ սկսնակ ու մանկանման, Երկնային կյանքի քայլերը արել:

Այստեղ է թառվան հոգին ավանդել, Իր երանելի դրախտին հասել, Այստեղ է կյանքում առաջին անգամ, Երկնային անգոր թևերը պարզել:

ՆՈՆԵՆԻ

Արևահուր, կարմիր գույնի ծաղիկներով պճնված, Հարսի նման գլուխը կախ, նազանքներով զմայլված, Ազնվածին թագուհու պես կանաչ շորերը հագին, Ձով զեփյուռի հովի թևին օրորվում է նռենին:

Նա գարուն է ամռան տապին այգիներում մեղրօծված, Շիկ ծաղիկներով հմայիչ՝ կարմրավառ ճրագված, Ծաղկաբույլերը մեջն առած ալ հատիկները նռան, Ընտանիքի պես՝ համերաշխ, պահում է պինդ, անբաժան:

Ասես մոլորակ է թարսած, ներսը որդիք հավաքած, Քամած արյունը արևից, ամբողջությամբ առատած,

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՃԵԼԻ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ



ասոցիացիայի նախագահ Մարիաննա Վարդանյանի մոտ է ասոցիացիայի կողմից ստացված խմբակային ֆիթնես-աերոբիկայի մարզչի միջազգային որակավորում: Ներկայում աշխատում է Ստեփանակերտի 8-րդ դպրոցի եւ Ուշու-քունգֆուի ֆեդերացիայի մարզադահլիճներում գործող երկու խմբերի հետ, որոնցում մարզվում են 40 եւ ավելի աղջիկներ ու կանայք:

- Հասմիկ, ի՞նչ խնդիրներով ու պահանջներով են դիմում Ձեզ հաճախողները:

- Դիմում են տարբեր նպատակներով. քաշի նվազեցման կամ ավելացման խնդրով, մկանային համակարգի ամրացման, կազմվածքի շտկման, ողնաշարի հետ կապված խնդիրների լուծման, արգանդի իջեցման դեպքերում: Դիմում են նաեւ պարզապես առողջ ապրելակերպի եւ հետաքրքիր ժամանց ունենալու հավակնորդներ:

- Իսկ պատահո՞ւմ է, որ դիմեն առողջական լուրջ խնդիրներ ունեցող մարդիկ կամ մերկայացնեն այնպիսի պահանջներ, որոնք չեն համապատասխանում ֆիթնեսի կանոններին:

- Նախ նշեն, որ ֆիթնեսի մարզումները հակացուցումներ գրեթե չունեն, իհարկե, կան ծայրահեղ դեպքեր, որոնք պետք է հաշվի առնել, ինչպես, օրինակ՝ առողջական լուրջ խնդիրները, ողնաշարի հիվանդությունները եւ այլն: Դիմորդների համար պարտադիր է, որ իրենց առողջության մասին լավ տեղեկացված լինեն: Լինում է նաեւ, որ մարզումների ժամանակ են վերհանվում որեւէ խնդիրներ: Դիմորդների կողմից երբեմն արտահայտվում են ցանկություններ կամ պահանջներ, որոնց իրականացումը, մեղմ ասած, կարող է վնասել իրենց: Ներկայում քրեմի է վերածվել ամերիկյան հանրահայտ կինոդերասանուհի Անջելինա Ջոլիին սնանկվելը: Երբ ինձ դիմում են այդ ցանկությամբ առանց այն էլ միտք կազմվածքով աղջիկներ, սկսում են բացատրել, որ հյուսիսում պետք չէ: Պետք է հասկանալ, որ այդ դերասանուհին կորցրել է իր երբեմնի գեղեցիկ կազմվածքն ու հմայքը հիվանդության պատճառով: Ներկայում նրա չափից ավել միտքությունն ու հյուսիսում տեսքը նորմալ չեն եւ ընդօրինակելու ենթակա չեն: Ներկայացնում են, որ քաշը հաշվելու հատուկ բանաձեւ կա, յուրաքանչյուրի համար անհատական չափորոշիչներ կան, որոնք պետք է հաշվի առնել եւ հետեւել առողջ, գեղեցիկ եւ հմայիչ լինելու համար, այլ ոչ թե ընկնել կուռքերի հետեւից: Բարեբախտաբար ստացվում է բոլոր դիմորդներին ճիշտ մոտեցում ցուցաբերել, օգնել որպես ընկեր եւ մարզիչ: Միշտ էլ հաշվի են առնում հաճախորդի ցանկությունն ու պահանջը, նրա ֆիզիկական կարողությունները, առողջական վիճակը, գրուցում են որպես ընկեր, բայց մարզում են՝ հետեւելով այն կանոններին, որոնք սահմանում է եվրոպական պրոֆեսիոնալ ֆիթնես մարզիչների ռեգիստրը(ereps) :

- Համարվում է, որ քաշը նվազեցնելու

Սեր ժամանակներում ֆիթնեսի մարզիչը ոչ միայն ուսուցիչ է խրատատու է, այլեւ՝ ընկեր, հոգեբանական գիտելիքների տիրապետող, ոգեշնչող եւ մոտիվացնող դեմք:

Մարզական էջի հյուրն արդեն մեկ տարի Ստեփանակերտում գործող ֆիթնես-աերոբիկայի խմբերի մարզիչ Հասմիկ ԱՂԱՔԱԼՅԱՆն է, որի հետ հաճելի է օգտակար զրույցի ժամանակ պարզաբանեցինք ֆիթնեսի եւ առհասարակ առողջ ապրելակերպին վերաբերող հետաքրքիր հարցեր:

Ծնվել է 1990 թ. սեպտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Էջմիածին քաղաքում: Դպրոցն ավարտելուց հետո հաճախել է հաշվապահական դասընթացների, սակայն, ինչպես ինքն է ասում, հաշվապահի մասնագիտությունն իրենը չէր: Մանկուց սիրում ու հետաքրքրվում էր երգով ու պարով, երգում էր այնպիսի մասնագիտություն ունենալ, որը կապված լիներ ռիթմի հետ: 8 տարի առաջ Հասմիկն ամուսնացավ «Լուսարար»-ի մարզական էջի հետեւորդներին քաջածանոթ՝ մուայթայի մարզիչ Ալեքսան Աղաբալյանի հետ եւ տեղափոխվեց Արցախ: Ռիթմի եւ սպորտի հանդեսը եւ հետաքրքրությունն ունեցող աղջիկը բաց չթողեց ամուսնու խմբում մուայթայ սիրողական պարապելու հնարավորությունը: Բայց հարվածային սպորտի մարզումները երկար չտևեցին. ծննդաբերություն, իսկ հետո՝ համավարակով պայմանավորված սահմանափակումներ: Մինչդեռ «Նա, ով ցանկանում է, գտնում է հնարավորություններ» ասվածը վերագրվում է Հասմիկին: ՏՃԱ-յին մարզումները ոչ ոք չէր սահմանափակել, ինչն էլ առիթ դարձավ նրա կողմից ֆիթնեսի աշխարհ ընկղմվելու, սիրելու եւ մասնագիտանալու այդ հաճելի եւ օգտակար զբաղմունքի մեջ: Ինքնուրույն պարապմունքներին հաջորդեցին մասնագիտացված դասընթացները: 2021թ. հունիս-հուլիս ամիսներին Հասմիկ Աղաբալյանը մասնակցեց դասընթացների 33 ֆիթնես-աերոբիկայի ազգային

ամենալավ միջոցը վազքն է: Այդպե՞ս է, արդյոք: Ինչպե՞ս կբացատրեք վազքով զբաղվելու անմախաղեպ արդիականությունը:

- Վազքն առողջության համար շատ լավ է, բայց ոչ լավագույնը քաշի նվազեցման համար: Ինքս պարբերաբար վազում եմ առողջ մկանային եւ շնչառական համակարգ պահելու համար, աղջիկներին էլ խորհուրդ եմ տալիս հնարավորության դեպքում առավել ցածր արագությամբ կատարել թեթեւ վազքի տեսքով, բայց քաշը նվազեցնելու համար կան ավելի արդյունավետ տեխնիկաներ, ճիշտ սննդակարգ եւ համապատասխան մարզումներ:

- Նիհարելու հայտնի կանոնը, որ պետք է ավելի շատ կալորիա ծախսել, քան ընդունում ես, բոլոր դեպքերում չէ, որ սպասված արդյունք է տալիս: Ի՞նչ անել նման դեպքում:

- Կալորիաները հաշվելիս շատ նրբություններ կան, որոնք անհրաժեշտ է իմանալ: Պետք է կարողանալ ճիշտ ստեղծել կալորիայի դիֆիցիտ: Եթե ամեն ինչ ճիշտ է արվում, բայց արդյունք չկա երկար ժամանակ, ապա պետք է խորհուրդ հարցնել բանիմաց մարզչից կամ դիմել բժշկի:

- Պարապելու համար օրվա ո՞ր ժամն է հարմար:

- Պարապմունքները ոչ մի ժամի չեն արգելվում: Առավոտյան մարզումները կարելի են օրվա մեջ ակտիվ լինելու համար: Մենք կազմակերպում ենք մեր ֆիթնեսը երեկոյան: Կարելի է, որ պարապմունքի ժամը չլինի քնելուց անմիջապես առաջ: Ուժային վարժություններ կատարելիս սրտի խփոցները արագանում են ու այդպես պահպանվում շուրջ երկու ժամ: Հանգիստ քնելու համար պետք է երեկոյան պարապմունքը կազմակերպել այնպես, որ դրանից հետո երկու ժամ հանգստանալու հնարավորություն լինի, հետո նոր քնել:

- Թվարկեք առողջ ապրելակերպի երեք գլխավոր տարրեր:

- Կարծիք կա, թե առողջ ապրելակերպ վարելու կամ քաշը կարգավորելու համար սննդի որոշ տեսակներ պետք է բացառել սննդակարգից եւ խստորեն պահել այդպես: Շատ մարդիկ հենց այդպես էլ անում են՝ օրգանիզմը ենթարկելով սթրեսի: Դա ճիշտ չէ: Սննդակարգից բացառել որեւէ մթերք պետք չէ, այլ պետք է սննդի ճիշտ պատրաստման ձեւերին հետեւել: Օրինակ՝ կարտոֆիլը պետք չէ բացառել սննդացուցակից, այլեւ չուտել դա տապակած կամ ֆրիի ու չիպսի տեսքով: Խաշած



կարտոֆիլը նույնիսկ անհրաժեշտ է ընդունել: Ճիշտ պատրաստված եւ թարմ սնունդը թերեւս առողջ ապրելակերպի առաջնային տարրն է:

Երկրորդը մարզվելն է: Ցանկացած սպորտ առողջություն է: Պետք է կարողանալ ժամանակ հատկացնել, մարզումները դարձնել օրվա անբաժան մաս՝ աստիճանաբար բարդացնելով, ավելացնելով ինտենսիվությունը եւ հաճախականությունը: Մարզվող մարդը պետք է էներգիա տվող, սպիտակուցային սնունդ ընդունի մախքան պարապմունքը սկսելը երկու կամ երկուս ու կես ժամ առաջ: Ինչպես հայտնի է, քաղցած չի կարելի պարապել: Իսկ պարապելուց 20 րոպեից 2 ժամ հետո պետք է պարտադիր սպիտակուցային սնունդ ուտել, որպեսզի վերականգնվեն մարզման ընթացքում բարակած մկանային հյուսվածքները: Կարելի է ընդունել կեֆիր, անյուղ տավարի միս, ձուկ, ձվի սպիտակուց: Պարապմունքի ժամանակ խորհուրդ է տրվում սովորական կամ դետոքս ջուր խմել լինոնով, լայնով, անանուխով կամ վարունգով:

Երրորդը քնելն է: Ճիշտ պահպանված քնի ռեժիմը թույլ է տալիս կանխել նյարդային համակարգի բազում խնդիրներ, ինչպես նաեւ քաշի հետ կապված խանգարումներ:

- Ավոհող եւ ֆիթնեսը համատեղելի՞ են:

- Ավոհոլային խմիչքներից գինին է, որ չի արգելվում: Քաշը նվազեցնելու կոնկրետ ժամանակահատվածում ավոհողը, աղը եւ կծու արգելվում են, որպեսզի չստացվի նյութափոխանակման ու ստամոքսի խնդիր:

- Ինչպե՞ս մոտիվացնել ինքը քեզ եւ մարզումները դարձնել կենսակերպի մաս:

- Մոտիվացնող բաները շատ են մեր ներսում եւ մեր շրջապատում, պարզապես պետք է նկատել դրանք: Եթե հանդիպել եք լավ մարզչի, դա էլ է լավ մոտիվացիա: Հմուտ մարզիչը պրոֆեսիոնալ խորհուրդներից բացի նաեւ մարզվողին ոգեշնչություն ու մոտիվացիա է տալիս: Մոտիվացնող հանգամանք է նաեւ առողջ մարմին, ամուր ու ձգված կազմվածք ունենալու ցանկությունը, որին կարելի է հասնել մարզումների միջոցով: Մոտիվացիա է նաեւ ինքը քեզ սիրելը, խնամելը, հետեւելը, որը նույնպես կատարվում է մարզումների միջոցով:

- Ձեզ համար հավանաբար բոլոր թվարկվածները մոտիվացիայի աղբյուր են, իսկ ո՞րն էր այն կետը, որը հանդիսացավ մարզական կարիերայի մեկնարկի հիմքը:

- Իսկապես ես շատ բան եմ սովորել իմ մարզչից՝ Մարիաննայից: Եղել են պահեր, երբ կասկածել եմ իմ հնարավորություններին, բայց նրա մոտիվացնելու շնորհիվ կարողացել եմ հաղթահարել դժվարությունները: Սիրում եմ մարզվել եւ դրա միջոցով մարդկանց օգնել: Ինձ համար լավագույն մոտիվացիան իմ գոհ դիմորդներն են, որոնց մոտ պարապմունք առ պարապմունք առաջընթաց եմ նկատում: Բայց կարիերայի մեկնարկի հիմքը կապվում է ամուսնու հետ: Երբ ինքնուրույն պարապում էի տնային պայմաններում ինքս ինձ համար, ընդ որում, բավականին հասուն տարիքում, երեխա ունենալուց հետո էր դա, փորձում էի, չարչարվում էի չափազատ բացել: Ալեքսանը տեսնում էր փորձերս ու կարծես թե չհավատալով, որ կարող եմ, ասում էր, թե այդ հասակում ո՞վ է չափազատ բացում: Գուցե եւ նրա այդ արտահայտության շնորհիվ 15 օր մարզվելուց հետո ստացվեց այդ դիրքում մկաններս պահել: Այդպես համոզվեցի, որ կարող եմ նույնիսկ իմ ուժերից ավելի մի բանի էլ հասնել: Մարզությամբ զբաղվելու ցանկություն եւ վստահություն առաջացավ մոտս:

- Իսկ Ձեր մարզիչ դառնալու ինչպե՞ս է վերաբերվում:

- Լավ է վերաբերվում, օգնում է ու աջակցում անհրաժեշտության դեպքում: Երբ հիշում եմք այդ «ճակատագրային» արտահայտությունը, ասում է, որ այդպես է ասել ինձ մոտիվացնելու համար, որովհետեւ գիտեր, որ կարող եմ:

- Համացանցում հայտարարություն էիք տեղադրել, որ օգոստոսին կազմակերպվում եք անվճար նվեր-մարզումներ Ստեփանակերտի մարզադաշտում: Առաջիկայի համար երեւի ուրիշ ծրագիր էլ ունեք:

- Օգոստոսին լրանում է մարզական գործունեությանս մեկ տարին, ինչի առթիվ որոշել եմ բացօթյա անվճար մարզումներ անցկացնել Ստեփանակերտի մարզադաշտում յուրաքանչյուր կիրակի երեկոյան: Սիրով հրավիրում եմ աղջիկների ու կանանց, ովքեր ցանկանում են մարզվել: Սեպտեմբերին նախատեսում եմ մանկական ֆիթնեսի խումբ բացել՝ ընդգրկելով 5-ից 12 տարեկան տղաների եւ աղջիկների՝ հաշվի առնելով շատ ծնողների խնդրանքն ու առաջարկը:

Արցախիս խաղաղությունն էմ ցանկանում, իսկ առողջ ապրելակերպ վարել, ֆիթնես եւ աերոբիկա պարապել ցանկացողներին պատրաստ եմ աջակցել:

ՍՊՈՐՏԸ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ Է

Ի՞ՆՉ ՄԱՐԶԱՁԵՎՈՎ ԶԲԱՂՎԵՆ ԱՎԵԼ ՔԱՆՆՈՒՆԵՆՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԸ

Որոշ մարդիկ կարծում են, թե առողջ երեխան պետք է մի քիչ թմբուկ լինի: Շատ դեպքերում երեխաների մոտ առկա ավել քաշը ծնողների կողմից ուշադրության չի արժանանում՝ մտածելով, թե երեխան կմեծանա, ու ճարպը ինքն իրեն կկորչի: Իրականում այդպես չէ:

Ներկայում յուրաքանչյուր հինգերորդ երեխա ունի ավել քաշ: Դրանում մեղադրում են անբավարար ակտիվությանը եւ վնասակար սննդին: Եվ դա անհիմն մեղադրանք չէ: Իսկ քաշն իր հերթին դառնում է երեխայի պասիվության ու սպորտով զբաղվել չուզենալու պատճառ. մարդ առհասարակ ամաչում է ինքն իրենից:

Այդ վիճակից երեխային հանելու լավ միջոց է սպորտը: Մանկության հասակում ավել քաշը հաղթահարելն ավելի հեշտ է. մարմինը հնազանդ ընդունում է ցանկացած ձեւ ու պահպանում երկար տարիներ: Բացի դրանից, երեխան ունենում է նոր ընկերներ ու հետաքրքրություններ, նա կարող է դառնալ ավելի ինքնավստահ եւ շփան համար բաց: Ով գիտի, միգուցե սպորտի հանդեպ հետաքրքրությունը հաճելի զբաղմունքից կվերածվի կյանքի գործի:

Որպեսզի պարապմունքները օգտակար լինեն, պետք է մարզաձևեր ճիշտ ընտրել: Շատ ծնողներ հիմնվում են իրենց չիրակաւնացած երազանքների կամ իրենց պատկերացումների վրա, թե ինչ է պետք երեխային: Դա կարող է հանգեցնել նրան, որ երեխան կհնարի բազմաթիվ միջոցներ, թե ինչպես բաց թողնի մարզումները, իսկ առողջ եւ գեղեցիկ մարմնի փոխարեն կստանա մուլս ավել ճարպը, առողջության վատթարացում հետագայում ու մի շարք բարդություններ:

Սպորտաձևերի ընտրության հարցում չսխալվելու համար անհրաժեշտ է հետեւել չափորոշիչներին: Երեխայի ֆիզիկական տվյալները մեծ նշանակություն ունեն մարզաձև ընտրելիս: Խաղային կամ թիմային մարզաձևերում ավել քաշ ունեցողները չեն ողջունվում: Դաժան է հնչում, բայց եթե երեխան ունի ավել քաշ ու ֆիզիկական ցածր տվյալներ, կարող է ծախողել ողջ թիմի խաղը: Բնավորությունը մուլսպես կարելու ցուցանիշ է: Ամաչկուտ երեխաները կորչում են թիմային

խաղերում: Ավարկուտ եւ ծուլիկներին ավելի լավ է մարտարվեստների խմբակ ներգրավել, իսկ ֆիզիկապես լիարժեք զարգանալու համար ավելի հարմար են անհատական մարզաձևերը, օրինակ՝ մարմնամարզությունը: Իսկ ի՞նչ է դուր գալիս երեխային: Կարծում



եք, թե պարզ տղա երեխային վայել զբաղմունք չէ, իսկ աղջիկ երեխան չպե՞տք է իմանա կարատեի հնարներ: Գուցե եւ ճիշտ եք: Բայց եթե ձեր զավակը շունչը պահած դիտում է սպորտային պարերի մրցաշարերը, իսկ աղջնակը նայել է բոլոր ֆիլմերը, որոնք կապված են մարտարվեստների հետ, ուրեմն ելքը մեկն է՝ հարմարվեք: Եվ իհարկե, տարեք երեխային մարզական խմբակ:

Չաշվի առեք, թե պարապմունքի վայրը տնից ինչ հեռավորության վրա է գտնվում, արդյո՞ք հարմար է շաբաթական երկու կամ երեք անգամ գնալ մարզաձև:

Հմուտ մարզիչ: Համարվում է, որ ինչքան խիստ է ուսուցիչը, այնքան լավ են սովորում նրա սաները: Իրականում միշտ չէ դա այդպես: Երբեմն ավելի կարելու է մարդկային վերաբերմունքը, քան խստությունը: Հատկապես, երբ երեխան գեր է ու ինքնավստահ չէ, խստությունը նա կընդունի որպես դաժանություն, նկատողությունները կհամարի նվաստացնելու փորձ եւ կկորցնի իր ուժերի հանդեպ հավատը: Իդեալական տարբերակ է, երբ մարզիչը ոչ միայն արդար է ու հմուտ, այլ նաեւ անկեղծ շահագրգռված է իր գործով, հենց այդպիսի մարդիկ կարող են սերմանել ոչ մի-

այն տեխնիկան, այլև տվյալ մարզաձևի ճիշտ ընկալումն ու սպորտի հանդեպ իսկական սերը:

Գեր երեխաների համար հաճախ ընտրում են ակտիվ սպորտաձևեր՝ համարելով, որ այդպես նրանք արագ կունենան ճիշտ կազմվածք: Մինչդեռ ավել քաշ ունեցող երեխաների համար մարզանքի ժամանակ հեշտ չի լինում: Ֆուտբոլը եւ շատ շարժում պահանջող այլ մարզաձևեր շատ մեծ ծանրաբեռնվածություն են տալիս սրտին ու հոդերին, որոնք գեր երեխաների մոտ առանց դրա էլ ամեն օր «տանցվում» են: Քանի որ այդ երեխաները հաճախ չեն սիրում ֆիզիկական ակտիվությունը, կարելի է նրանց հետաքրքրել ավելի արդյունավետ մարզաձևերով՝ մարտարվեստներով: Ձյուդո, կարատե, թաեքվոնդո մարզաձևերը գրեթե ամենուր հասանելի



են, ընդ որում, ինչպես տղաների, այնպես էլ աղջիկների համար: Կարելու է, որ նախքան ուղարկելը բացատրեք երեխային, որ իսկական մարտերն այնքան էլ դիտարժան չեն,

ինչպես ֆիլմերում, իսկ արդյունք ստանալու համար մեծ ջանքեր են պահանջվելու:

Եթե մանկական յոգայի դասընթացներ գտնեք, համարեք, որ ամենաունիվերսալ տարբերակն ունեք: Յոգան հարմար է եւ աղջիկներին, եւ տղաներին: Մանկական յոգայի պարապմունքները հարմարեցված են երեխաների համար, լավ հանում են սթրեսը, ամրացնում են մկանները ու զարգացնում ճկունությունը: Լավագույնս համապատասխանում են «հանգիստներին», որոնք վազել չեն սիրում:

Աղջիկների համար նազելի կազմվածքը մեծ նշանակություն ունի. չէ՞ որ նրանք ուզում են գեղեցիկ ու հմայիչ լինել: Մարմնամարզությունը եւ աթլետիկական կարող են օգնել, զարգացնել ճկունությունը, մարմինը դարձնել ձգված եւ գեղեցիկ:

Լողի մասին արժե առանձին խոսել: Լողը կարող է զգալի օգուտ տալ ավել քաշ ունեցողներին: Բացի դրանից վնասվածք ստանալու հավանականությունը նվազագույն է: Պարապմունքներն օգնում են, որ օրգանիզմը կոփվի, անհրաժեշտության դեպքում՝ հաղթահարվի վախը ջրից: Լողով զբաղվող երեխաները ձեռք են բերում լավ կողմնորոշվելու ունակություն, տոկոսություն, ճկունություն, ամուր նյարդային ու սիրտ-անոթային համակարգ: Պարապմունքներն օգնում են ուղղել շատ թերություններ, ինչպես, օրինակ՝ մարմնի ասիմետրիան:

Սպորտով զբաղվելը կարող է լուծել առողջության հետ կապված մի շարք խնդիրներ, հաղթահարել ավել քաշը: Բայց ոչ բոլոր մարզաձևերն են երաշխավորում իդեալական կազմվածք: Հիշենք սուսնոյի մարտիկներին, ծանր քաշում մրցող բռնցքամարտիկներին, որոնք ուրիշ մարզիկներից ոչ քիչ են մարզվում: Չարժե նիհարելը կապել միայն ֆիզիկական ակտիվության բարձրացման հետ: Պետք է հաշվի առնել ճիշտ սննդակարգը, ինչպես նաեւ՝ փորձել վերադարձնել երեխայի հավատն իր ուժերի նկատմամբ: Եթե ինքնուրույն չի ստացվում, դիմեք մանկական հոգեբանի: Գտեք ընդհանուր շարժողական զբաղմունք, խնդրեք ուրիշ երեխաների՝ ավելի շատ ժամանակ հատկացնել ձեր երեխային: Շատ հնարավոր է, որ դա ավելի մեծ արդյունք տա, քան անընդհատ ֆիզիկական ծանրաբեռնվածությունը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿՈՐԵԼ Է

Բաղյան Գարիկ Յուրիկի՝ CTI N255528 դիպլոմը (որը վկայում է, որ նա 1991թ. ընդունվել է 1994թ. «Անասնաբույժ» մասնագիտությամբ ավարտել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումը), մնացել է Ադրբեջանի կողմից օկուպացված Հաղրուբի շրջանի Սեծ Թաղեր գյուղում:

Համարել անվավեր: ***

Ավագյան Բահատուրի Անդրանիկի՝ Ստեփանակերտի տեխնիկական ուսումնարանի «Առևտրային բաժինը» 1987 թվականին ավարտելու մասին դիպլոմը մնացել է Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի՝ Ադրբեջանի կողմից օկուպացված Շեխեր գյուղում:

Համարել անվավեր: ***

Մնացականյան Զաուր Սերգեյի (ծնված 1982թ. Բաքու քաղաքում, անձնագիր՝ AT0575683) Ստեփանակերտի գյուղատնտեսական քոլեջից տրված դիպլոմը, որը վկայում է, որ նա 2003թ. ավարտել է հիշյալ ուսումնական հաստատության «Ավտոճանապարհային» բաժինը, մնացել է ԼՂՀ Մարտունու շրջանի՝ Ադրբեջանի կողմից օկուպացված Թաղավարդ գյուղում:

Համարել անվավեր: ***

Յաշա Գրիգորիի Ստեփանյանի՝ KT N 018250 դիպլոմը, որ նա 1983թ. ընդունվել է 1988թ. ավարտել է Ասկերանի շրջանի սովխոտեխնիկումը՝ «Անասնաբույժ» մասնագիտությամբ, մնացել է Ադրբեջանի կողմից օկուպացված Հաղրուբի շրջանի Դրախտիկ գյուղում:

Համարել անվավեր:

ԸԻԴ/0005/04/22 Սաթենիկ Արարատի Սուլեյմանյանի սնանկության գործով պարտատերերի նախնական ցուցակ

Ի/Ի	Պահանջատիրոջ անվանումը	Պահանջի չափը	Պահանջների հերթն ըստ «Սնանկության մասին» ԼՂՀ օրենքի
1	«Հայկնոմբանկ» ԲԲԸ	851.212 ՀՀ դրամ	Ապահովված պահանջ/ երաշխավորություն/
2	ԱՀ առողջապահության նախարարություն	170.634 ՀՀ դրամ	95-րդ հոդվածի 1-ին մաս / 4 / հերթ
3	ԱՀ առողջապահության նախարարություն	8.531.718 ՀՀ դրամ	95-րդ հոդվածի 1-ին մաս / 7 / հերթ
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	177.611,60 ՀՀ դրամ	95-րդ հոդվածի 1-ին մաս / 7 / հերթ

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ՇՊԵՎՈՐ

ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ



Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից մեկն է, որը տոնվում է ամեն տարվա օգոստոսի 15-ին ամենամոտ կիրակի օրը և սկսել է հիշատակվել 5-րդ դարից: Իր Որդու համբարձումից հետո Սուրբ Մարիամի ապրած կյանքի մասին Սուրբ Գրքում ոչ մի հիշատակություն չկա, նրա մասին խոսում է միայն ավանդությունը: Տոնի պատմությունը քաղված է սրբերի վկայարանությունների գրքից՝ «Հայաստավուրք»-ի: Սրբոց տոներն ընդհանրապես մեր եկեղեցին տոնում է երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերին, սակայն Աստվածածնի Վերափոխման տոնը դրվել է կիրակի օրը այն պատճառով, որ այն ամբիջապես կապված է Քրիստոսի գալստյան հետ:



ԴՐՎԱԳ «ՀԱՅՍՏԱՎՈՒՐՔ»-ԻՑ

«Պե՛տք է և արժա՛ն է իմանալ այն ամենը, ինչ պատահեց ամենաօրինակ սուրբ Մարիամ Աստվածածնի ննջման ժամանակ, այսպես է սկսում «Հայաստավուրք»-ը Տիրամոր ննջման մասին պատմությունը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի համբարձումից հետո Աստվածամայրը՝ իր Որդու պատգամի հնագանդ (Հովհաննես 19:26-27), 12 տարի ապրեց Հովհաննես առաքյալի խնամատարության ներքո: Աստվածամայրը օրեր ու գիշերներ հարատևում էր պահքի ու աղոթքի մեջ: Հաճախ գնում էր Տիրոջ թափուր գերեզման և ծնկաչոք աղոթում: Վայելում էր աշակերտների ուշադրությունն ու հոգատարությունը: Ամենսրբուհի Կույս Մարիամի այս մարմնավոր կենցաղից հանդերձ լայն փախադրվելուց երեսուն օր առաջ նրա մոտ իջավ Գաբրիել հրեշտակապետը, ով հղության ավետիսն էր տվել նրան, և տվեց երկրից երկինք փոխադրվելու ավետիսը: Եվ դարձյալ տասնչորս օր հետո եկավ նույն Գաբրիել հրեշտակապետն ու ասաց նրան, որ պետք է մարմնից ելնի և մտնի Աստծո մոտ, որի համար բերկրանքով լց-

վեց և հոգով զվարթացավ Մարիամը և ելավ գնաց Քրիստոսի տնօրինական վայրերում շրջելու և աղոթելու: Տասներկու օր հետո դարձյալ եկավ Գաբրիելը, խոնարհվելով ողջույն տվեց տիրածին Կույս Մարիամին և ասաց.

- Ուրախացիր, բերկրյալը կանանց մեջ, քանզի քեզ կոչում է մեր արարիչը՝ քո Միածին Որդին:

Եվ նրան տվեց բրաբիոնե պսակը, որ բերել էր դրախտից:

Մարիամը գնաց Չիթենյաց լեռ՝ աղոթելու, և բոլոր բույսերն ու տնկիները խոնարհվում և երկրպագում էին նրան: Այսպես էր ասում Աստվածածինն իր աղոթքում. «Դու, Տեր իմ Հիսուս, Որդի Քո Հոր Աստծո և իմ Քո մոր և աղախնի, Տեր իմ Միածին, Դու հնքը խոստացար, որ կգաս ինձ մոտ և Քեզ կավանդեմ իմ Հոգին»: Այնժամ երկնքից ձայն լսվեց և նրան ասաց. «Չեմ թողնի քեզ, մայր իմ Տիրուհի, այլ կգամ քեզ մոտ և կկատարեմ ինձ ուղղված քո բոլոր խնդրանքները»:

Եվ աղոթքն ավարտելով՝ ամենօրինակ Մարիամը երեք օր շրջեց Տիրոջ և իր Միածին որդու տնօրինական վայրերով: Եվ վերադարձավ իր տուն, կանչեց իր բոլոր ազգականներին և այլ քրիստոնյա կանանց, նրանց ասաց, որ վառեն ջահերն ու կանթեղները և երեք օր մնան իր մոտ:

Ապա Մարիամը, սկսեց պատմել նրանց Աստծո մեծագործությունների մասին: Եվ ասաց. «Երկու հրեշտակ են գալիս դեպի մարդու հոգին, մեկը՝ չար, մյուսը՝ բարի: Եթե մեղավոր է հոգին, չար հրեշտակին է ավանդում այն, և խնդում են դեղեր հոգու կորստյան վրա, և չար հրեշտակը մեղավոր հոգուն ցույց է տալիս արդարության դատաստանի և տանջանքների վայրերը: Եվ եթե արդար է հոգին, ավանդում է բարի հրեշտակին, որը ցույց է տալիս նրան կյանքի հարուստները և փառքի հանգիստը»: Եվ մինչև նա այս բաներն էր պատմում, եկավ Հովհաննես ավետարանիչը, որ Երուսաղեմի մերձակա գյուղերում Քրիստոսին էր քարոզում, ներս մտավ, ողջույն տվեց և երկրպագեց Աստվածամայր Կույս Մարիամին: Նա ընդունեց ողջույնն ու ասաց. «Բարով եկար, իմ որդյակ և իմ Որդու սիրելի»: Եվ ասաց նրան իր փոխադրման մասին, և ցուցում տվեց իրեն թաղել իր հայրենիքում՝ Գեթսեմանիի ձորում: Երբ աղոթքն ավարտելով, Ս. Կույսը վերադարձավ տուն, կանչեց իր բոլոր ազգականներին և այլ քրիստոնյա կանանց, նրանց պատմեց իր սպասվող փոխադրման մասին: Սուրբ Կույսը ցանկացավ ննջելուց առաջ հաղորդվել իր Միածին Որդու մարմնից և արյանը: Հովհաննեսը կանանց և Աստվածամոր հետ ելավ Վերնատուն և պատարագ մատուցեց: Այդ ժամանակ Սուրբ Հոգու կանչով ամբողջ աշխարհից հավաքվեցին առաքյալներն ու յոթանասուն աշակերտները, ամեն մեկն իր գտնվելու վայրից, եկան հասան Աստվածածնի ննջմանը: Պատարագի ավարտից հետո բոլորը գնացին Ս. Կույսի տուն: Գիշերն անցկացրին հսկումով և աղոթքներով: Իսկ Սրբուհի Մարիամը առավոտյան՝ արևածագին, ձեռքերը վեր բարձրացրեց և աղոթեց առ Աստված, ապա պառկեց իր մահճում՝ սպասելով մոտալուտ մահվանը:

Հովհաննեսը, առնելով կիպարիսե մի տախտակ, բոլոր առաքյալների հետ աղաչում էր Աստվածամորն, ասելով. «Ո՛վ Տիրածին Կույս, քանի որ պատրաստվում ես գնալ Քո անծկալի Միածնի մոտ, վերցրու այս տախտակն ու օրհնի որ այն, և հիվանդների բժշկության պատճառ թող լինի, մանավանդ բորոտների: Որպեսզի ովքեր ապավինեն քո բարեխոսությանը, իրենց անձերին առողջություն և ցավերին ու հիվանդություններին

բժշկություն գտնեն»: Աստվածամայրը վերցրեց տախտակը խաչակնքեց և դրեց իր երեսին, թրջեց արտասուքներով և խնդրեց Աստծուն նրանով կատարել ամեն ցավի, առավել և՛ բորոտության բժշկություն: Եվ այդ պահին լուսեղեն կամար իջավ Սրբուհու վրա, և լսվեց մի ձայն, որ ասում էր. «Մայր իմ, կտրվի քեզ այն ամենն, ինչ կամենում ես»: Նույն ժամին մեծ որոտ եղավ, աստվածային անուշ հոտ բուրեց, և առաքյալներից բացի բոլորը թմրեցին: Աստվածամոր պատկերը նկարվեց փայտի վրա: Երկնքից իջավ Սուրբ Կույսի Որդին՝ երկնային զորքերի բազմությամբ, և հրեշտակապետները՝ Գաբրիելն ու Միքայելը, կանգնած էին նրա առջև: Դրեց տախտակն Աստված որդու առջև, Նա աստվածային աջով տեառնագրեց մոր նկարված պատկերը, և Աստվածամայրն իր կենդանագիր պատկերը տվեց առաքյալներին: Ապա զվարթ դեմքով ավանդեց իր սրբասունդ հոգին ամենամաքուր Կույսն իր Միածին Որդու ձեռքը:

Աննկարագրելի էր Աստվածամոր հոգու պայծառությունը, քանզի երևաց առավել սպիտակ, քան լույսը, մարդու ամբողջական պատկերն ու տիպարն էր կրում, տասնհինգամյա պատանու տեսքով՝ առանց արուի և եղի հատկանշական տարբերությունների: Այս տեսան բոլոր առաքյալներն ու զարմացան: Պետրոսը մեծագույն հիացմամբ տիրոջն ասաց. «Ո՛վ կարող է այսպես պայծառ արեգակի նմանվել, ինչպես Քո անարատ մայրը»: Տերն ասաց նրան. «Բոլոր մարդկանց հոգիներն էլ ի սկզբանե այդպես պայծառ են ստեղծել, ինչպես տեսաք Իմ Մոր հոգին, բայց մեղքերը սևացնում և աղտոտում են դրանք»: Ապա պատվիրեց գնալ Գեթսեմանիի ձորը, պատրաստել մոր գերեզմանն ու մարմինն այնտեղ ամփոփելուց հետո երեք օր չհեռանալ տապանից»: Ապա Տերը վերացավ երկինք: Այնժամ խմբվեցին սուրբ առաքյալները և քրիստոնյա կանայք, անարատ կույսի մարմինը պատեցին մաքուր կտավներով և բարձրացնելով այն՝ դրեցին դագաղի մեջ: Վրան դրեցին բրաբիոնե պսակը, և առաքյալները, իրենց ուսերին վերցնելով, դագաղը տարան տապանում դնելու:

Երբ թաղման թափորը տանում էր Ս. Կույսի մարմինը, հրեաները, չար նախանձի մոլությամբ բռնված, ելան թափորի դեմ՝ սուրբ մարմինը գետնին գցելու մտադրությամբ, սակայն հանկարծակի բոլորն էլ կուրացան: Քահանաներից մեկը՝ Սոփոնիա անունով, ձեռքերով կախվեց դագաղից, որ քաշելով՝ Սուրբ Կույսի մարմինը գետնին գցի, սակայն իսկույն ձեռքերը կտրվեցին արմունկներից և մնացին դագաղից կախված: Նա գետնին թավալվելով Սուրբ Կույսին Աստվածածին էր խոստովանում և ներում խնդրում առաքյալներից: Պետրոսը հանդիմանեց նրանց անիմաստ մոլուցքը, ապա առաքյալները սկսեցին խնդրել Աստվածածնին և մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որ բժշկի նրան: Ապա բռնելով բարձրացրին նրան և հասցրին կտրված արմունկներին, արմունկներն իսկույն միացան կտրված տեղերից ու նա առողջացավ: Նրան տվեցին բրաբիոնի ոստերից մեկը, որ դնի հրեաների խավարած աչքերին, և ովքեր հավատացին, նրանց աչքերը բացվեցին և գնում էին նրանց հետ՝ փառավորելով Սուրբ Կույս Մարիամին:

Առաքյալները Մարիամի մարմինը դրեցին գերեզմանում և երեք օր մնացին այնտեղ պահպանելով գերեզմանը:

Երեք օր գերեզմանից լսվում էր հրեշտակների փառաբանության ձայնը: Չորրորդ օրվա առավոտյան երկնային անմարմին զորքերի ուղեկցությամբ Քրիստոսը իջավ բարձունքներից, և, առանց բացելու կնքված գե-

րեզմանը, Կույսի աստվածոյնկալ մարմինը վերցնելով՝ միավորեց հոգուն, առավ նրան և բարձրացավ երկինք՝ նստեցնելով նրան իր աջ կողմում՝ փառքի պառոզին:

Առաքյալներից Բարդուղիմեոսը չէր ժամանել Աստվածամոր ննջմանը: Չորրորդ օրվա առավոտյան, երբ առաքյալներն աղոթում էին գերեզմանի վրա, Բարդուղիմեոսը եկավ, իմանալով Աստվածամոր երկինք փոխադրման մասին, շատ տխրեց, որ չկարողացավ հրաժեշտ տալ Աստվածամորը: Այն ժամանակ Պետրոսը կարգադրեց բացել գերեզմանը, որպեսզի Բարդուղիմեոսը տեսնի Աստվածամոր մարմինն ու մխիթարվի:

Երբ բացեցին տապանը, տեսան, որ Կույսի մարմինն այնտեղ չէ: Եվ դրանից հետո առաքյալների ակնաչօցի վերկից ձայն լսվեց, որ ասում էր. «Տվեք Աստվածամոր փայտյա պատկերը Բարդուղիմեոս առաքյալին, որ նրանով մխիթարվի և տանի իր քարոզության երկիրը: Եվ Աստվածամոր մարմնի մասին մի երկմտեք, քանզի նրա Արարիչը և Որդին փոխադրեց նրան Իր մոտ»:

Այն երկիրն, ուր պետք է հետո Տիրամոր անձեռակերտ պատկերը տաներ Բարդուղիմեոսը, դարձավ Հայաստանը: Ահա թե ինչպիսի մեծ ողորմության արժանացավ Հայաստանը Տիրոջ կողմից. և՛ Քրիստոսի, և՛ Աստվածամոր անձեռակերտ պատկերներն իրենց հանգրվանը գտել են Հայաստանում, որը երկու դար անց պետք է դառնար առաջին քրիստոնյա պետությունը:

Բայց այսօր պետք է մեր մեջ ուժ գտնենք և խոստովանենք, որ մեր ոչ քրիստոնեական վարք ու բարքով, ինչպես տիրոջ խոսքն է ասում, առաջիններից հետիններ ենք դարձել:

Խնդրենք Սուրբ Աստվածածինն իր բարեխոսությանը օգնի, որ մորից կարողանանք հետիններից առաջին դառնալ:

ԽԱՂՈՂՈՐՀՆԵՔ

Վերափոխման տոնին սուրբ պատարագից հետո կատարում են խաղողի օրհնության կարգ և ապա օրհնված ողկույցները բաժանում ժողովրդին:

Հին Ուխտան սովորություն կար տարվա առաջին բերքը նվիրել Աստծուն կամ տաճարին (Բ Օրենք, 26:1-10): Դրանով նրանք իրենց երախտագիտությունն էին հայտնում Տիրոջն իրենց պարզաձեռ բարիքների համար և Նրա օրհնությունը խնդրում: Նախաքրիստոնեական Հայաստանում էլ այս սովորությունը կար: Քրիստոնեական շրջանում այն նույնպես բարեպաշտական արարողությունների մաս կազմեց: Պտուղներից ընտրվեց խաղողը, քանի որ Հիսուսն իրեն մնանցնում էր խաղողի որթի՝ «ես եմ ծշմարիտ որթատունկը» (Հովի 15:1) Ս. Աստվածածնի տոնը և խաղողօրհնեքը ծիսական տեսանկյունից իրար հետ որևէ առնչություն չունեն: Եղած կապը, թերևս, եղանակի հարմարությունն է, որ Ս. Աստվածածնի տոնը և պտուղների երախտագիտության օրհնությունը համատեղվել են:

Խաղողի օրհնության ընթացքում աղոթքներ են հղվում ոչ միայն պտղի, այլև դրա մշակողի, ընծայողի, հողագործի և հողի համար՝ արարչից խնդրելով առատ, բերրի, բնական արհավիրքներից զերծ տարի:

Այսպիսով՝ խաղողօրհնեքը առհասարակ Աստծուց մարդուն պարզված բերքի բոլոր տեսակի պտուղների օրհնությունն է:

Արթուր ԱՐԲԱՍՄՅԱՆ Արցախի թեմի ԶԳԷԿ փոխարևորեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՊՈՍԿՈՍՈՒԹՅԱՆ ԳԵՂՈՒՄԻ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
Ստեփանակերտ, Գ. Թումանյան փ. 95, 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության՝ 13.08.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: